ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՎԵՉԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Թողարկում 2

Երևան 2006

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա»
հասարակական կազմակերպություն

ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

(Ուղեցույց)

Թողարկում 2

Երևան 2006

Ուղեցույցի հեղինակներ

Ուղեցույցի աշխատանքային խմբի ղեկավար և խմբագիր՝

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ, փաստաբան
Կարեն Զադոյան

Ուղեցույցի աշխատանքային խմբի փորձագետներ՝

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության փոխնախագահ, փաստաբան **Դավիթ Աբգարյան**
«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության անդամ, իրավաբան
Լյուդվիգ Դավթյան

Սույն հրատարակությունը ստեղծվել է ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության Եվրոպայի և Եվրասիայի բյուրոյի տնտեսական զարգացման գրասենյակի աջակցությամբ՝ EMT-G-00-02-00008-00 դրամաշնորհի պայմանների համաձայն: Ներկայացված կարծիքները պատկանում են Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիային (հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 7, բն. 2, հեռ՝ 540199, վեբ կայք՝ www.ayla.am) և պարտադիր չէ, որ համընկնեն ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության տեսակետներին: «Միջնորդ դատարանների և միջնորդ քննության ինստիտուտի զարգացումը Հայաստանում» ծրագիրը Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան իրականացնում է Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամի հետ համատեղ:

Ուղեցույցը փորձաքննություն է անցել Ամերիկայի Իրավաբանների Ընկերակցության Կենտրոնական Եվրոպայի և Եվրասիայի Իրավական Նախաձեռնության հայաստանյան գրասենյակում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան

I. ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐ

1. «X» կազմակերպությանն առընթեր Միջնորդ դատարանի կանոնադրություն
2. Միջնորդ դատավորի վարքագծի կանոնագիրք

II. ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐ

1. Պայմանագրերում միջնորդ վերապահման օրինակներ
2. Միջնորդ համաձայնության օրինակելի ձևեր

ա) միջնորդ համաձայնություն վեճը՝ մշտապես գործող միջնորդ դատարանի լուծմանը հանձնելու վերաբերյալ

բ) միջնորդ համաձայնություն՝ կոնկրետ վեճը լուծող (ad hoc) միջնորդ դատարան ստեղծելու և վեճը այդ դատարանի լուծմանը հանձնելու մասին

3. Հայցադիմումի օրինակելի ձև
4. Հայցադիմումի պատասխանի օրինակելի ձև

ՆԱԽԱԲԱՆ

Հայտնի է, որ իրավական վեճերի լուծման դատական միջոցներից բացի, միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվում են վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմները: Վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմները իրավական վեճերի այլընտրանքային լուծման հնարքների և մեթոդների համակցություն են, որոնց կիրառման հետևանքով կողմերը հասնում են փոխընդունելի համաձայնության: Իրավական վեճերի լուծման այլընտրանքային եղանակներից լայնորեն տարածված են միջնորդ դատավարությունը (arbitration), միջնորդությունը (mediation), բանակցությունները (negotiation) և այլն:

Ներկա պայմաններում մեր երկրում վեճերի լուծման ալընտրանքային եղանակների կիրառման մշակույթի ներդրման և համապատասխան ավանդույթների ձևավորման խնդիրը բավականին հրատապ է: Դա կնպաստի իրավական բնույթի վեճերի արագ և արդյունավետ լուծմանը, տնտեսվարող սուբյեկտների՝ դատական մարմիններում վեճեր լուծելու հետ կապված ֆինանսական ծախսերի նվազեցմանը, խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացմանը, բիզնես միջավայրի բարելավմանը:

1999 թվականից Հայաստանում գործում է «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» օրենքը, որը միտված է նպաստել իրավական վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմներից մեկի՝ միջնորդ դատավարության ինստիտուտի կայացմանը և զարգացմանը: Սակայն պետք է նշենք, որ այս ինստիտուտը Հայաստանում դեռևս լիովին չի կայացել և տնտեսվարող սուբյեկտները, որպես կանոն, իրենց վեճերը փորձում են լուծել ավանդական եղանակով՝ դիմելով դատական մարմիններ: Դրա պատճառներից մեկն էլ իրազեկության պակասն է:

Սույն ուղեցույցը նպատակ ունի նպաստել վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների վերաբերյալ տեղեկատվական վակուումի վերացմանը, տարբեր մասնագիտական կազմակերպությունների կողմից իրենց կից միջնորդ

դատարանների ստեղծմանը, տնտեսվարող սուբյեկտների՝ հատկապես փոքր և միջին ձեռնարկությունների կողմից իրենց գործունեության ընթացքում ծագող իրավական վեճերի լուծման այլընտրանքային եղանակների կիրառմանը:

Հուսով ենք, որ սույն ուղեցույցում տեղ գտած տեղեկատվությունը, այն է՝ միջնորդ դատարանի և միջնորդ դատավարությանը վերաբերվող փաստաթղթերի նմուշային օրինակները, կնպաստեն վերոնշյալ խնդիրների լուծմանը:

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ Կարեն Զադոյան

Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամի նախագահ Գագիկ Պողոսյան

Ի. ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐ

1. «Ա» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հաստատվել է «Ա» կազմակերպության կողմից
2005 թ. հոկտեմբերի 26-ին և գործողության մեջ է մտել
2005 թ. դեկտեմբերի 1-ին

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Միջնորդ դատարանի իրավական կարգավիճակը

1.1. «Ա» Կազմակերպությանն առընթեր Միջնորդ դատարանը (այսուհետ տեքստում՝ Դատարան) հանդիսանում է ինքնակազմակերպվող մշտապես գործող դատարան, որն իր գործունեությունն իրականացնում է «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ տեքստում՝ օրենք) հիման վրա:

1.2. Դատարանն ունի կլոր կնիք և գործում է «Ա» կազմակերպությանն (այսուհետ տեքստում՝ Կազմակերպություն) առընթեր, որն ապահովում է Դատարանի նյութական և կազմակերպական գործունեությունը, հաստատում է միջնորդ քննության կանոնները:

1.3. Դատարանի կազմավորման և գործունեության կարգը, միջնորդ քննության կարգը սահմանվում է օրենքով և սույն կանոնադրությամբ, եթե կողմերը համաձայնություն չեն կայացրել միջնորդ քննության այլ կանոններ ընդունելու վերաբերյալ:

Հոդված 2. Դատարանի իրավասությունը

2.1. Դատարանը լուծում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքին համապատասխան ՀՀ դատարանների իրավասությանը ենթակա գույքային վեճերը՝ բացառությամբ պետահիրավական, վարչահիրավական, հարկային և այլ իշխանական ենթակայության վրա հիմնված, ինչպես նաև ալիմենտային իրավահարաբերություններից ծագող վեճերի և իրավաբանական անձանց ու քաղաքացիաների սնանկության գործերի:

2.2. Կողմերի միջնորդ համաձայնության առկայության դեպքում Դատարան դիմելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները (այդ թվում՝ անհատ ձեռներեցները) և իրավաբանական անձինք օտարերկրյա քաղաքացիներն ու իրավաբանական անձինք (այսուհետ տեքստում՝ օտարերկրյա անձինք), ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք:

2.3. Վեճի լուծումը Դատարանի կողմից հնարավոր է միայն կողմերի միջև սույն կանոնակարգի 3-րդ հոդվածով սահմանված ձևով կնքված միջնորդ համաձայնության առկայության դեպքում:

Հոդված 3. Միջնորդ համաձայնությունը

3.1. Միջնորդ համաձայնությունը պայմանագրային կամ ոչ պայմանագրային բնույթի, որոշակի իրավահարաբերության կապակցությամբ կողմերի միջև կնքված համաձայնությունն է՝ առկա կամ հնարավոր, բոլոր կամ որոշակի վեճերը միջնորդ դատարանի լուծմանը հանձնելու մասին:

3.2. Միջնորդ համաձայնությունը կարող է կնքվել ինչպես առանձին պայմանագրի (միջնորդ պայմանավորվածություն), այնպես էլ հիմնական պայմանագրում վերապահման (միջնորդ վերապահում) ձևով:

3.3. Միջնորդ համաձայնությունը կնքվում է գրավոր:

3.4. Միջնորդ համաձայնությունը կնքված է համարվում, եթե դա կատարվել է կողմերի ստորագրած մեկ փաստաթուղթ կազմելով կամ կնքված է նամակներով, հեռատիպով, հեռագրով կամ այդպիսի համաձայնության ամրագրումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ հաղորդումներ փոխանակելու միջոցով:

3.5. Սույն հոդվածի կանոնները չպահպանելու դեպքում միջնորդ համաձայնությունն առոչինչ է:

Հոդված 4. Միջնորդ համաձայնության բովանդակությունը

4.1. Միջնորդ համաձայնության մեջ պետք է նշվեն՝

1) Դատարանի կազմավորման կարգը և դրա խախտման հետևանքները.
2) միջնորդ դատավորի ինքնաբացարկի և նրան բացարկ հայտնելու կարգը.
3) միջնորդ դատավորի ինքնաբացարկի և նրան հայտնված բացարկի լուծման կարգը:

2. Դատարանին վեճը հանձնելու մասին կողմերի միջնորդ համաձայնությունը սույն հոդվածի 1-ին կետում նշված պայմանների փոխարեն կարող է հղում պարունակել սույն կանոնակարգին:

4.2. Սույն հոդվածի կանոնները չպահպանելու դեպքում միջնորդ համաձայնությունն առոչինչ է:

II. ՄԻՋՆՈՐԴ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 5. Դատարանի գործունեության սկզբունքները

Դատարանի գործունեությունը հիմնվում է օրինականության, դատավորների անկախության, օրենքի և դատարանի առջև քաղաքացիների, իրավաբանական անձանց հավասարության, կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքների վրա:

Հոդված 6. Օրինականության սկզբունքը

1. Դատարանի կազմավորման և նրա կողմից միջնորդ քննության կարգը սահմանվում է «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ քաղաքացիական, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերով, սույն կանոնադրությամբ և քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող այլ օրենքներով և իրավական ակտերով:
2. Միջնորդ դատավորները, կողմերը և միջնորդ քննությանը մասնակցող այլ անձինք պարտավոր են պահպանել միջնորդ դատարանների և միջնորդ քննության մասին նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջները:

Հոդված 7. Միջնորդ դատավորի անկախությունն ու անկողմնակալությունը

1. Միջնորդ դատավորը իր պարտականություններն իրականացնելիս անկախ է և ենթարկվում է միայն օրենքին: Անձը, որը ուղղակի կամ անուղղակի կերպով շահագրգռված է գործի ելքով, չի կարող լինել միջնորդ դատավոր: Այս պահանջների չպահպանումը հիմք է հանդիսանում միջնորդ դատավորի բացարկման համար:
2. Միջնորդ դատավորը մինչև գործի քննությունը պարտավոր է Դատարանին և կողմերին հայտնել այն հանգամանքների մասին, որոնք կարող են կասկած հարուցել նրա անկախության և անաչառության վերաբերյալ: Դատավորի անկախության և անկողմնակալության վերաբերյալ կասկած հարուցող հանգամանքների առկայությունը հիմք է դատավորի բացարկման համար:

Հոդված 8. Օրենքի և դատարանի առջև քաղաքացիների և իրավաբանական անձանց հավասարությունը

1. Օրենքի և դատարանի առջև բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձինք հավասար են և առանց խտրականության հավա-

սարապես պաշտպանվում են օրենքով:

2. Յուրաքանչյուր ոք ունի ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված բոլոր իրավունքները, ազատությունները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:

Հոդված 9. Կողմերի մրցակցությունը և իրավահավասարությունը

Դատարանում գործի քննությունն ու լուծումը իրականացվում է կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքի հիման վրա: Յուրաքանչյուր կողմ պետք է հավասար հնարավորություն ունենա ներկայացնելու իր դիրքորոշումը, պաշտպանելու և իրականացնելու իր իրավունքներն ու օրինական շահերը:

III. ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 10. Միջնորդ դատավորները

1. Դատարանը կազմված է միջնորդ դատավորներից, որոնք 5 տարի ժամկետով ընդգրկվում են կազմակերպության կողմից հաստատված միջնորդ դատավորների անվանացուցակի մեջ:
2. Կողմերը կարող են ընտրել նաև դատավորների անվանացուցակի մեջ չընդգրկված միջնորդ դատավորներ:
3. Միջնորդ դատավոր կարող է նշանակվել (ընտրվել) 30 տարին լրացած, ---------- ոլորտում անհրաժեշտ գիտելիքներ ունեցող կամ վիճարկվող իրավահարաբերությունների բնագավառում 10 տարվա աշխատանքային փորձ ունեցող ֆիզիկական անձը, որը տվել է իր համաձայնությունը կատարելու միջնորդ դատավորի պարտականությունները և ընդգրկված է միջնորդ դատավորների անվանացուցակի մեջ:
4. Ոչ ոք չի կարող իր քաղաքացիության պատճառով զրկվել միջնորդ դատավոր նշանակվելու (ընտրվելու) իրավունքից, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան սահմանված չէ:

Հոդված 11. Դատարանի նախագահը և նրա տեղակալը

1. Դատարանի նախագահը և նրա տեղակալը ընտրվում են դատավորների ընդհանուր ժողովում միջնորդ դատավորների անվանացուցակից 5 տարի ժամկետով:
2. Դատարանի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում նրա տեղակալը, կազմակերպում է Դատարանի գործունեությունը, ներկայացնում Դատարանը երկրի ներսում և արտաքին հարաբերություններում, իրականացնում սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

Հոդված 12. Քարտուղարությունը

1. Քարտուղարությունն իրականացնում է Դատարանի գործունեության ապահովմանն ուղղված գործառույթներ, որոնք նախատեսված են սույն կանոնադրությամբ:
   Քարտուղարությունը ղեկավարում է պատասխանատու քարտուղարը, որին Դատարանի նախագահի ներկայացմամբ նշանակում է Կազմակերպության ղեկավարը:
2. Դատարանում գործի քննության հետ կապված ֆունկցիաներն իրականացնելիս քարտուղարությունը ենթարկվում է Դատարանի նախագահին:

Հոդված 13. Առանձին հանձնաժողովներ

Դատարանի նախագահի որոշմամբ Դատարանի կազմում կարող են ձևավորվել առանձին հանձնաժողովներ: Հանձնաժողովի ղեկավարը (նախագահ) օժտված է Դատարանի նախագահի բոլոր ընթացակարգային լիազորություններով այն բոլոր հարցերով, որոնք վերաբերում են հանձնաժողովի վարույթում գտնվող գործին: Հանձնաժողովի ղեկավարը իրավասու է ձևավորել Դատարանի կազմը, ինչպես նաև լուծել հանձնաժողովին հանձնված գործերի հետ կապված մի շարք այլ կազմակերպական հարցեր:

Հոդված 14. Առանձին հանձնաժողովի իրավասությունը

Գործը վերաբերում է հանձնաժողովի իրավասությանը, եթե կողմերի միջև կայացված համաձայնության մեջ գործի քննության վայր է նշված հանձնաժողովի գտնվելու վայրը կամ նշված է, որ գործը պետք է քննվի տվյալ հանձնաժողովի կողմից:

Հոդված 15. Առանձին հանձնաժողովի լուծարումը

Առանձին հանձնաժողովը լուծարվում է Դատարանի նախագահի որոշմամբ: Հանձնաժողովի լուծարման դեպքում նրան հանձնված գործի քննությունը իրականացնում է Դատարանը:

Հոդված 16. Դատարանի նստավայրը և դրա նիստերի անկացման վայրը

1. Դատարանի նստավայրը Երևան քաղաքն է:
2. Վեճի լուծման վայրը որոշում է Դատարանը՝ հաշվի առնելով գործի բոլոր հանգամանքները՝ ներառյալ կողմերի համար հարմար լինելու գործոնը, եթե նրանց համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ:

Հոդված 17. Դատավարության լեզուն

1. Դատավարության լեզուն (լեզուները), որը պետք է օգտագործվի վեճը լուծելիս, որոշվում է կողմերի համաձայնությամբ: Նման համաձայնության բացակայության դեպքում դատավարության լեզուն որոշում է դատարանը:
2. Դատարանը կարող է կողմերից պահանջել գրավոր ապացույցի տեքստի թարգմանությունն այն լեզվով, որը պետք է օգտագործվի վեճը լուծելիս:

Հոդված 18. Դատարանի կողմից գործի քննության ժամկետը

1. Դատարանը միջոցներ է ձեռնարկում հնարավորին չափ սեղմ ժամկետներում գործը քննելու համար: Կոնկրետ գործով միջնորդ քննությունը պետք է ավարտվի ոչ ուշ, քան Դատարանին հայցադիմում ներկայացնելուց հետո մեկ ամսվա ընթացքում: Անհրաժեշտության դեպքում Դատարանի նախագահը իրավունք ունի երկարաձգել գործի քննության ժամկետները: Գործի քննության ժամկետները կարող են երկարաձգվել վիճող կողմերի համաձայնությամբ:
2. Դատարանը պատշաճ ձևակերպված հայցադիմումը ստանալուց հետո յոթ օրվա ընթացքում միջոցներ է ձեռնարկում գործը իր վարույթ ընդունելու կամ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում կայացնելու ուղղությամբ:

Հոդված 19. Փաստաթղթերի ներկայացումը

1. Գործի քննության համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը վիճող կողմերը պետք է Դատարանին ներկայացնեն երկու օրինակով: Հայցվորն ու պատասխանողը պետք է ունենան բոլոր այն փաստաթղթերը, որոնցով հայցվորը հիմնավորում է իր պահանջները, իսկ պատասխանողը՝ իր առարկությունները:
2. Բոլոր փաստաթղթերը, բացի գրավոր ապացույցներից, ներկայացվում են ----- լեզվով: դատարանն իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ կարող է մյուս կողմից պահանջել ներկայացված փաստաթղթերի ------- լեզվով թարգմանությունները կամ նրա հաշվին ապահովել դրանց թարգմանությունը:

Հոդված 20. Փաստաթղթերի ուղարկումը կողմերին

1. Դատարանն ապահովում է գործի բոլոր փաստաթղթերի ուղարկումը (տրամադրումը) կողմերին: Դրանք ուղարկվում են հայցային պահանջներում կողմերի նշած կամ պայմանագրում կամ գործի այլ փաստաթղթերում պարունակվող հասցեներով: Միևնույն ժամանակ մատնանշվում է փաստաթղթերի ուղարկման ամսաթիվը:
2. Փաստաթղթերը կողմերին կարող են ուղարկվել պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ, հեռախոսապատճենով, հեռագրով, հեռատիպով, էլեկտրոնային փոստով կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող այլ միջոցների օգտագործմամբ կամ ստացականի հանձնմամբ (այսուհետ տեքստում՝ պատշաճ ձևով):
3. Դատարանի կողմից ուղարկված փաստաթղթերը համարվում են հասցեատիրոջը հանձնված նաև այն դեպքում, երբ հասցեատերը հրաժարվում է դրանք ընդունելուց կամ դրանք չի ստացել՝

չնայած փոստային առաքման ծառայության կողմից իրազեկված լինելու հանգամանքի: Փաստաթղթերը համարվում են սահմանված կարգով կողմի վերջին հայտնի հասցեով ուղարկված, եթե նույնիսկ գործի քննության ընթացքում նա արդեն այնտեղ չի բնակվում և փաստացի չի ստացել ծանուցումը:
4. Փաստաթղթերի ուղարկումը կողմերին ապահովում է քարտուղարությունը:

Հոդված 21. Միջնորդ դատավարության ծախսերը

1. Միջնորդ դատավարության ծախսերը կազմված են՝
   - միջնորդ տուրքից
   - միջնորդ դատավորների հոնորարից
   - գործի քննության հետ կապված հատուկ ծախսերից:
2. Միջնորդ տուրքի չափերը և դրանց վճարման կարգը որոշվում է սույն կանոնակարգով:

Հոդված 22. Միջնորդ տուրք

Միջնորդ տուրքը ներկայացված յուրաքանչյուր հայցի համար հայցվորից գանձվող գումար է, որը նշանակվում է Դատարանի գործունեության և միջնորդ քննության հետ կապված կազմակերպական խնդիրների լուծման նյութական ապահովության համար: Միջնորդ տուրքի հաշվին վճարվում է միջնորդ դատավորի հոնորարը, ինչպես նաև փակվում են միջնորդ քննության հետ կապված կազմակերպչական ծախսերը, բացի հատուկ ծախսերից:

Հոդված 23. Միջնորդ դատավորի հոնորար

Միջնորդ դատավորի հոնորարը նրա ծառայությունների դիմաց միջնորդ տուրքի հաշվին նրան վճարվող գումարն է:

Հոդված 24. Գործի քննության հետ կապված հատուկ ծախսեր

Գործի քննության հետ կապված հատուկ ծախսերը Դատարանի այն ծախսերն են, որոնք չեն մտնում միջնորդ տուրքը կազմող ծախսերի մեջ և լրացուցիչ գանձվում են կողմերից: Հատուկ ծախսերի մեջ են մտնում վկաներին կանչելու, ապացույցները գտնվելու վայրում զննելու համար ու Դատարանի կամ կողմերի նախաձեռնությամբ նշանակված փորձաքննության հետ կապված վճարման ենթակա, ինչպես նաև Դատարանի նախագահի (միջնորդ դատավոր) որոշմամբ գործի քննության հետ կապված այլ ծախսերի գումարները:

Հոդված 25. Ներկայացուցչական ծախսեր

Կողմը, որի օգտին կայացվել է Դատարանի վճիռը, իրավունք ունի գրավոր միջնորդությամբ մյուս կողմից պահանջել ներկայացուցչական ծախսերի հատուցում՝ ողջամիտ չափով: Եթե նման միջնորդություն չի ներկայացվել, ներկայացուցչական ծախսերը կողմը կրում է ինքնուրույն: Եթե հայցը բավարարվել կամ մասնակիորեն մերժվել է, ապա ներկայացուցչական ծախսերի հատուցումը կատարում է մյուս կողմը՝ համապատասխան չափով:

Հոդված 26. Միջնորդ տուրքի վճարման կարգը

1. Միջնորդ տուրքը գանձվում է հայցվորից՝ հայցադիմում ներկայացնելիս:
2. Միջնորդ տուրքը փոխանցվում է Դատարանի հաշվեհամարին կամ մուծվում է Դատարանի դեպոզիտ:
3. Միջնորդ տուրքը գանձվում է դրամով: Եթե հայցը հարուցված է արտարժույթով, ապա այն կարող է վճարվել դրամով կամ եվրոյով՝ անկախ հայցադիմումում ներկայացված արտարժույթից:
4. Հայցագինը դրամով ներկայացված չլինելու դեպքում միջնորդ տուրքը որոշվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքի դրույքաչափերով կամ եվրոյի փոխարժեքին համապատասխան արտարժույթով:

Հոդված 27. Միջնորդ տուրքի չափը

1. Միջնորդ տուրքը սահմանվում է՝ ելնելով հայցի գումարի տոկոսներից հետևյալ չափերով՝
   - մինչև 1 մլն դրամ՝ 1%, բայց ոչ քիչ, քան 1000 դրամը,
   - 1 մլն.-ից ավելի՝ 10000 դրամ + 0.4% յուրաքանչյուր 1 մլն դրամի դիմաց:
2. Եթե հայցը գնահատման ենթակա չէ, միջնորդ տուրքը գանձվում է միջնորդ տուրքի նվազագույն չափով:
3. Հայցագնի ավելացման, հայցային պահանջների փոփոխման դեպքում հայցվորը պարտավոր է վճարել միջնորդ տուրքի համապատասխան մասը՝ հայցագնի ավելացման վերաբերյալ միջնորդություն ներկայացնելուց հետո 5 օրվա ընթացքում:

Հոդված 28. Հատուկ ծախսերի վճարման կարգը

Դատարանի հատուկ ծախսերը վճարում են կողմերը՝ այդ ծախսերի մասին Դատարանի կողմից համապատասխան հաշիվ ներկայացվելուց հետո 3 օրվա ընթացքում: Եթե ծախերը չեն վճարվում 10 օրվա ընթացքում, ապա Դատարանը կարող է որոշում կա-

յացնել իր հայեցողությամբ համապատասխան դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ՝ ելնելով գործի քննության նպատակահարմարությունից և դրա հետաձգման անհնարինությունից:

Հոդված 29. Միջնորդ տուրքը վերադարձնելը

1. Եթե հայցվորը հետ է վերցնում հայցը կամ հրաժարվում է հայցից մինչև Դատարանի կազմի ձևավորումը, հայցվորի պահանջով նրան վերադարձվում է գանձված և նվազագույն միջնորդ տուրքերի տարբերության 50 տոկոսը:
2. Դատարանի կազմի ձևավորումից հետո կողմերի միջև հաշտության համաձայնություն կայացվելու, հայցվորի կողմից հայցից հրաժարվելու դեպքում հայցվորի պահանջով նրան վերադարձվում է գանձված և նվազագույն միջնորդ տուրքերի տարբերության 30 տոկոսը:
3. Եթե սույն կանոնակարգով այլ բան նախատեսված չէ, գործի վարույթի դադարումից հետո վճարված միջնորդ տուրքը վերադարձվում է միջնորդ տուրքի նվազագույն չափը գերազանցող մասով:

Հոդված 30. Միջնորդ ծախսերի բաշխումը կողմերի միջև

1. Ծախսերի բաշխումը կողմերի միջև կատարվում է նրանց համաձայնությամբ: Նման համաձայնության բացակայության դեպքում ծախսերի բաշխումը կատարում է Դատարանը՝ բավարարված պահանջների չափին համամասնորեն:
2. Եթե պատասխանողը բավարարում է հայցվորի պահանջները հայց հարուցելուց հետո, դատական ծախսերը դրվում են պատասխանողի վրա անկախ գործի ելքից, եթե ծախսերի բաշխման մասին կողմերը այլ համաձայնություն չեն կայացրել:

Հոդված 31. Ներկայացուցչական ծախսերը կողմերի միջև բաշխելը

Կողմը, որի օգտին կայացվել է որոշումը, ներկայացուցչական ծախսերը նրա կողմից կարող են դրվել մյուս կողմի վրա տարբեր չափերով, եթե այդ ծախսերը հատուցելու մասին դիմումը ներկայացվել է միջնորդ քննության ընթացքում և հաստատվել Դատարանի կողմից:

Հոդված 32. Ընթացակարգային նորմերի խախտման հետևանքով առաջացած ծախսերը վճարելու

պարտականությունը կողմի վրա դնելը

Եթե միջնորդ ծախսերը ծագել են Դատարանի կողմից չորոշված անբարեխիղճ գործողությունների հետևանքով, ընթացակարգային նորմերի չարաշահմամբ, Դատարանը անկախ գործի ելքից կարող է դրանց վճարման պարտականությունը դնել այն կողմի վրա, որի գործողությունների (անգործության) հետևանքով դրանք առաջացել են:

Հոդված 33. Դատական ակտի կատարումը միջնորդ ծախսերի հատուցման մասով

Կողմը, որի կողմից ծագել են միջնորդ ծախսերը, պարտավոր է կատարել Դատարանի որոշումը՝ դրանք վճարելու վերաբերյալ Դատարանի կողմից սահմանված ժամկետում, իսկ եթե այդպիսի ժամկետ սահմանված չէ՝ անհապաղ:

Հոդված 34. Դատարանի կողմից կիրառվող իրավունքի նորմերը

1. Դատարանը վեճերը լուծում է «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող օրենքների, սույն կանոնադրության և այլ իրավական ակտերի ու Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հիման վրա:
2. Կողմերի միջնորդ համաձայնությամբ նախատեսված դեպքերում Դատարանը կիրառում է այլ պետությունների իրավունքի նորմեր:
3. Վիճելի հարաբերությունը կարգավորող օրենքի կամ այլ իրավական ակտի բացակայության դեպքում Դատարանը կիրառում է նույնանման հարաբերություններ կարգավորող օրենքի նորմերը (օրենքի անալոգիա): Նման նորմերի բացակայության դեպքում Դատարանը վեճը լուծում է՝ ելնելով իրավունքի սկզբունքներից (իրավունքի անալոգիա) :
4. Դատարանը կարող է կիրառել գործարար շրջանառության սովորույթներ:

Հոդված 35. Դատարանի որոշումը

1. Վեճի էության հետ չառնչվող և վեճն ըստ էության չլուծելու վերաբերյալ հարցերով Դատարանը կայացնում է որոշում:
2. Դատարանը որոշում է կայացնում հետևյալ դեպքերում՝ գործը

իր վարույթ ընդունելու, հայցի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու, գործը առանց քննության թողնելու, գործի վարույթը կարճելու, կասեցնելու կամ հետաձգելու, հայցը առանց քննության թողնելու, հայցի ապահովման միջոցներ կիրառելու, դատավորներ նշանակելու, դատարանի իրավասությունների, վճիռը պարզաբանելու և ուղղելու դեպքերում: Դատարանը կարող է կայացնել նաև օրենքով, սույն կանոնադրությամբ կամ միջնորդ համաձայնությամբ նախատեսված այլ որոշումներ:

Հոդված 36. Դատարանի որոշման բովանդակությանն առաջադրվող պահանջները

1. Դատարանի որոշման մեջ պետք է նշվեն՝
   1) որոշման կայացման տարին, ամիսը, ամսաթիվը վայրը.
   2) դատարանի անվանումը և կազմը.
   3) գործին մասնակցող անձանց անունները (անվանումները) և հասցեները.
   4) հարցը, որի կապակցությամբ կայացվել է Դատարանի որոշումը.
   5) շարժառիթները, որոնց վրա հիմնվում են Դատարանի հետևությունները.
   6) քննարկված հարցի վերաբերյալ Դատարանի հետևությունները:
2. Որոշումներն ընդունվում են Դատարանի կազմի կամ Դատարանի նախագահի կողմից: Դատարանի կազմը իրավասու է գործի քննության ընթացքում որոշումներ ընդունելու ցանկացած հարցի վերաբերյալ՝ բացառությամբ գործը վարույթ ընդունելու մասին որոշման:
3. Դատարանի նախագահը իրավասու է ընդունել որոշումներ՝ գործը վարույթ ընդունելու, հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու, գործը առանց քննության թողնելու, հայցի ապահովման միջոցներ կիրառելու և այլ ցանկացած հարցերով, եթե այդ հարցերի կապակցությամբ Դատարանի կազմը չի ընդունել համապատասխան որոշումներ և պայմանով, որ դրանք չհակասեն գործը քննող Դատարանի կազմի կողմից նախապես ընդունված որոշումներին և չխոչընդոտեն Դատարանի կազմին՝ գործը քննելիս:

Հոդված 37. Դատարանի որոշման մասին կողմերին ծանուցելը

1. Դատարանը իր որոշման պատճեն որոշում կայացնելուց հետո 5 օրվա ընթացքում ուղարկում է կողմերին, եթե այլ բան նախատեսված չէ սույն կանոնակարգով:
2. Բոլոր այլ հարցերի կապակցությամբ Դատարանն իրավունք ունի կայացնել համապատասխան որոշում՝ պահպանելով որոշում կայացնելու ընթացակարգային նորմերը:

Հոդված 38. Դատարանի նիստի արձանագրությունը

1. Դատարանի նիստում կազմվում է արձանագրություն, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ:
2. Արձանագրության մեջ նշվում են՝
   1) Դատարանի անվանումը և կազմը.
   2) դատական նիստի տարին, ամիսը և ամսաթիվը.
   3) տեղեկություններ կողմերի մասնակցության մասին.
   4) կողմերի դիմումները և միջնորդությունները.
   5) նիստի ընթացքի համառոտ նկարագրությունը
   6) այլ հանգամանքներ, որոնք կողմերը կպահանջեն ներառել արձանագրության մեջ:

   Արձանագրությունը վարում է դատական նիստի քարտուղարը:
4. Արձանագրությունը պետք է կազմվի ոչ ուշ, քան միջնորդ դատավորների կողմից Դատարանի որոշումը ստորագրելու օրը:
5. Արձանագրությունը ստորագրում է դատավորը (դատավորները):
6. Կողմերն իրավունք ունեն ծանոթանալ արձանագրությանը և դիտողություններ ներկայացնել դրա բովանդակության ճշտության վերաբերյալ դատարանի կողմից որոշում ընդունելուց հետո 10 օրվա ընթացքում: Արձանագրության վերաբերյալ ներկայացված դիտողությունները քննարկվում են Դատարանի նախագահի կողմից 10 օրվա ընթացքում՝ առանց կողմերի մասնակցության: Ժամկետների խախտմամբ ներկայացված դիտողությունները չեն ընդունվում:

Հոդված 39. Հայցի ապահովման միջոցները

1. Դատարանն իրավունք ունի իր հայեցողությամբ ընդունել հայցի ապահովման միջոցներ՝ վեճի առարկայի կապակցությամբ: Հայցի ապահովման միջոցներ կիրառելու մասին հայցվորի դիմումի հիման վրա Դատարանը կայացնում է համապատասխան որոշում, որը պարտադիր է երկու կողմերի համար: Հայցի ապահովման միջոցի փոփոխության կամ վերացման հարցը քննվում է Դատարանի նախագահի կամ Դատարանի կազմի կողմից, եթե Դատարանի կազմը ձևավորվել է հայցի ապահովման միջոցներ կիրառելու մասին հայցվորի կողմից դիմում ներկայացնելուց հետո 5 օրվա ընթացքում:

2. Հայցի ապահովման միջոցներ կարող են լինել՝
   1) պատասխանողին պատկանող, նրա կամ այլ անձի մոտ գտնվող դրամական միջոցների կամ այլ գույքի վրա կալանք դնելը,
   2) պատասխանողին կամ այլ անձին վեճի առարկայի հետ կապված գործողություններ կատարելն արգելելը,
   3) պատասխանողի վրա պարտականություն դնելը կատարելու այնպիսի գործողություններ, որոնք ուղղված են վիճելի գույքի պատահական կորուստը կամ վնասումը կանխելուն,
   4) վիճելի գույքը հայցվորի կամ այլ անձի պահպանությանը հանձնելը:
3. Դատարանը կարող է կիրառել նաև հայցի ապահովման այլ միջոցներ կամ միաժամանակ կիրառել մի քանի հայցի ապահովման միջոցներ:
4. Հայցի ապահովման միջոցները պետք է համաչափ լինեն ներկայացված պահանջներին:

Հոդված 40. Հաշտեցման միջոցներ

1. Կողմերի համաձայնությամբ Դատարանը կարող է կիրառել հաշտեցման միջոցներ: Հաշտեցման միջոցները կարող են կիրառվել վարույթի ցանկացած փուլում: Հաշտեցման միջոցներ կարող են կիրառվել Դատարանի ցանկացած դատավորի կամ վեճերի լուծման գծով մասնագիտացված նախագահի նշանակմամբ:
   Հաշտեցման վարույթը ավարտվում է հաշտության համաձայնության կայացմամբ: Դատարանի կողմից հաշտության համաձայնության հաստատման դեպքում գործի վարույթը կարճվում է:
2. Սույն կանոնակարգը չի կարգավորում հաշտության միջոցների կիրառման կարգը: Այդ կարգը սահմանվում է Դատարանի նախագահի կամ այն անձի կողմից, որը պարտադիր կարգով կիրառում է հաշտեցման միջոցներ կողմերի հավասարության պայմաններում և կողմերին հավասար հնարավորություն ընձեռելով ներկայացնելու իրենց դիրքորոշումը: Դատավորների կամ այլ անձի կողմից կիրառված հաշտեցման միջոցներում օգտագործված առաջարկությունները, առարկությունները, կողմերի դիրքորոշումը, փաստարկների և ապացույցների ներկայացումը իրավաբանական ուժ ունեն միայն տվյալ հաշտեցման միջոցների կիրառման փուլում և հայցային վարույթի վերսկսման դեպքում հաշվի չեն առնվում:

Հոդված 41. Կողմերի իրավունքները

1. Կողմերն իրավունք ունեն ծանոթանալ գործի նյութերին, դրանցից գրառումներ անել, հարուցել բացարկներ, ներկայացնել ապացույցներ, մասնակցել ապացույցների հետազոտմանը, գործով ներկայացնել գրավոր և բանավոր բացատրություններ, գործն ավարտել հաշտության համաձայնությամբ, պնդել իրենց պահանջները կամ հրաժարվել դրանցից, փոփոխել կամ ավելացնել հայցային պահանջները, այդ թվում՝ փոփոխել հայցի հիմքը և առարկան, ներկայացնել առարկություններ հայցային պահանջների դեմ: Կողմերն ունեն նաև սույն կանոնակարգով և օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ:
2. Կողմը, որին հայտնի է սույն կանոնակարգով սահմանված որևէ պահանջի խախտումը, բայց շարունակում է մասնակցել գործի քննությանը առանց այդ խախտման դեմ առարկություն ներկայացնելու, համարվում է իր առարկության իրավունքից հրաժարված:

IV. ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 42. Հայցի հարուցումը

1. Դատարանում հայցը հարուցվում է հայցադիմում ներկայացնելով:
2. Հայցվորն իր պահանջները շարադրում է հայցադիմումի ձևով և ուղարկում է պատասխանողին: Հայցը հարուցված է համարվում պատասխանողի կողմից հայցադիմումն ստանալու օրը:
   Հայցադիմումն ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում պատասխանողը հայցադիմումի վերաբերյալ պատասխան է ուղարկում հայցվորին: Ի պատասխան հայցադիմումի՝ պատասխանողը կարող է հակընդդեմ հայց հարուցել:
3. Փաստաթղթերն ուղարկվում են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ ստացականի հանձնմամբ (այսուհետ՝ պատշաճ ձևով)՝ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

Հոդված 43. Հայցադիմումի բովանդակությունը

1. Հայցադիմումում նշվում են՝
   1) կողմերի անունը (անվանումը) և հասցեն.
   2) հայցվորի պահանջները.
   3) հանգամանքները, որոնց վրա հիմնվում են հայցվորի պահանջները.
   4) հայցվորի պահանջների հիմքերը հաստատող ապացույցները.
   5) հայցագինը.
   6) հայցադիմումին կցված փաստաթղթերի ցանկը:
2. Հայցադիմումին կցվում են՝
   1) միջնորդ համաձայնության պատճենը.
   2) հայցվորի պահանջները հաստատող փաստաթղթերը.
   3) միջնորդ դատարան կազմավորելու առաջարկությունը և հայցվորի նշանակած դատավորի անունը:
3. Հայցադիմումը ստորագրում է հայցվորը կամ նրա ներկայացուցիչը: Եթե հայցադիմումը ստորագրել է հայցվորի ներկայացուցիչը, ապա կցվում է նրա՝ հայց հարուցելու լիազորությունները հավաստող լիազորագիրը:
4. Սույն հոդվածի կանոնները կիրառվում են նաև պատասխանի և հակընդդեմ հայցի նկատմամբ:

Հոդված 44. Հայցագինը

1. Հայցագինը որոշվում է՝
   1) դրամական միջոցներ բռնագանձելու հայցերով՝ բռնագանձվող գումարի չափից,
   2) գույքը պահանջելու հայցերով՝ գույքի շուկայական գնից,
   3) իրավունքի ճանաչման հայցերով՝ գույքային իրավունքի արժեքով, որի ճանաչման համար ներակայցվել է հայցը,
   4) չգնահատվող հայցերով՝ միջնորդ տուրքի նվազագույն չափով:
   Հայցագնի մեջ մտնում են նաև հայցադիմումում նշված տուժանքի (տուգանքի, տույժի) գումարները:
2. Մի քանի ինքնուրույն պահանջներից կազմված հայցագինը որոշվում է բոլոր պահանջներից ընդհանուր գումարով:
3. Հայցվորի կողմից հայցագինը չնշելու կամ ճիշտ չնշելու դեպքում այն որոշում է դատարանը:

Հոդված 45. Հայցադիմումը վերադարձնելը

1. Դատարանը կարող է վերադարձնել հայցադիմումը, եթե
   - չեն պահպանվել հայցադիմումի ձևին և բովանդակությանը սույն կանոնակարգով ներկայացվող պահանջները,
   - վճարված չէ միջնորդ տուրքը,
   - գործը չի կարող հանձնվել միջնորդ դատարանի քննությանը,
   - բացակայում է միջնորդ համաձայնությունը (հայցադիմումի ընդունումը չի խոչընդոտում Դատարանին հետագայում ստուգելու միջնորդ համաձայնության առկայությունը կամ բացակայությունը):
2. Հայցադիմումի մերժման համար հիմք հանդիսացող հանգամանքները վերացվելուց հետո հայցադիմումը կարող է կրկին ներկայացվել:

Հոդված 46. Հայցադիմումի սխալները վերացնելը

Պարզելով, որ հայցադիմումը չի համապատասխանում սույն կանոնակարգով սահմանված պահանջներին, Դատարանը հայցադիմումը վերադարձնում է հայցվորին կամ նրա ներկայացուցչին՝ դրանում առկա սխալները վերացնելու համար: Այդ դեպքում գործի նյութերը կարող են վերադարձվել հայցվորին կամ նրան հանձնվել վերջինիս խնդրանքով:

Հոդված 47. Նիստի մասին կողմերին ծանուցելը

1. Դատարանը կողմերին պատշաճ ձևով ծանուցում է նիստի անց-

կացման ժամանակի և վայրի մասին:
3. Վարույթի ժամանակ հասցեն փոխելու դեպքում կողմը պարտավոր է այդ մասին պատշաճ ձևով ծանուցել Դատարանին և մյուս կողմին: Նման ծանուցման բացակայության դեպքում դատավարական փաստաթղթերն ուղարկվում են վերջին հայտնի հասցեով և համարվում են հանձնված, թեկուզև կողմն այլևս չի գտնվում կամ չի բնակվում այդ հասցեում:

Հոդված 48. Գործը դատական քննության նախապատրաստելը

Անհրաժեշտության դեպքում Դատարանը կարող է ձեռնարկել լրացուցիչ միջոցներ գործի քննությանը նախապատրաստվելու համար, այդ թվում՝ առաջարկել կողմերին ներկայացնելու լրացուցիչ ապացույցներ: Հայցադիմումի դեմ պատասխանողի կողմից առարկություններ չներկայացնելը չի կարող մեկնաբանվել որպես նրա կողմից հայցային պահանջների ընդունում:

Հոդված 49. Դատարանի կազմի ձևավորումը

1. Միջնորդ դատավորների թիվը որոշվում է կողմերի միջնորդ համաձայնությամբ, սակայն բոլոր դեպքերում այն պետք է լինի կենտ: Եթե կողմերի միջնորդ համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ, Դատարանն ստեղծվում է երեք դատավորի կազմով: Վեճը միանձնյա լուծելիս միջնորդ դատավորը հանդես է գալիս որպես միջնորդ դատարան:
2. Եթե կողմերի միջնորդ համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ, ապա կողմերից յուրաքանչյուրը նշանակում է մեկ միջնորդ դատավոր: Նշանակված երկու միջնորդ դատավորներն ընտրում են երրորդին՝ նախագահողին:
3. Եթե միջնորդ դատավոր նշանակելու մասին կողմի դիմումն ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում մյուս կողմը չի նշանակում երկրորդ միջնորդ դատավոր, կամ կողմերի նշանակած դատավորները 30 օրվա ընթացքում համաձայնություն ձեռք չեն բերում երրորդ միջնորդ դատավորի (նախագահողի) ընտրության վերաբերյալ, ապա միջնորդ դատավորին կամ նախագահողին նշանակում է կազմակերպության ղեկավարը՝ Դատարանի դատավորների անվանացուցակից:

Հոդված 50. Միանձնյա դատավորի ընտրությունը

1. Գործը քննվում է միանձնյա դատավորի կողմից, եթե կողմերը համաձայնություն են կայացրել գործը միանձնյա դատավորի կողմից քննելու վերաբերյալ: Եթե կոնկրետ միջնորդ դատավորի ընտրության հարցում կողմերը համաձայնություն չեն կայացրել, միանձնյա միջնորդ դատավորին նշանակում է Դատարանի նախագահը:
2. Գործը քննվում է միանձնյա դատավորի կողմից նաև այն դեպքում, երբ
   - կողմերը ընտրել են միևնույն դատավորին.
   - կողմերից ոչ մեկը դատավոր չի ընտրել:
3. Գործի քննությունը միանձնյա դատավորի կողմից իրականացվում է Դատարանի նախագահի որոշմամբ՝ այդ մասին ծանուցելով կողմերին: Եթե սույն հոդվածի 2-րդ կետի հիման վրա դատական կազմի կազմավորման մասին ծանուցում ստանալուց հետո ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում կողմերից որևէ մեկը պահանջում է գործի կոլեգիալ քննություն, գործի քննությունն իրականացվում է կոլեգիալ կարգով: Այդ դեպքում դատական կազմը ձևավորվում է ընդհանուր հիմունքներով:

Հոդված 51. Միջնորդ դատավորի ինքնաբացարկի ու նրան բացարկ հայտնելու հիմքերը և կարգը

1. Գործը քննող միջնորդ դատավորը կարող է մինչև գործի քննությունն սկսելն ինքնաբացարկ հայտնել: Ինքնաբացարկը հայտնվում է գրավոր, որում շարադրվում են դրա հիմքերը: Գործի քննության ընթացքում ինքնաբացարկ հայտնել թույլատրվում է միայն այն դեպքում, երբ ինքնաբացարկի հիմքը միջնորդ դատավորին հայտնի է դարձել գործի քննությունն սկսելուց հետո:
2. Միջնորդ դատավորին կարող է բացարկ հայտնվել մինչև գործի քննությունն սկսելը՝ նրա անաչառության վերաբերյալ հիմնավոր կասկած հարուցող հանգամանքների առկայության դեպքում: Բացարկը հայտնվում է գրավոր, որում շարադրվում են դրա հիմքերը:
   Գործի քննության ընթացքում բացարկ հայտնելը թույլատրվում է միայն այն դեպքում, եթե բացարկի հիմքը կողմին հայտնի է դարձել գործի քննությունն սկսելուց հետո:
3. Նույն հիմքերով բացարկ կարող է հայտնվել նաև փորձագետին և թարգմանչին: Այդ դեպքում բացարկի հարցը լուծում է դատարանի կազմը:

Հոդված 52. Դատարանի կազմի փոփոխությունը

1. Եթե միջնորդ դատավորը չի կարող մասնակցել գործի քննությանը, այդ թվում նրա բացարկման պատճառով, նրան փոխարինում է մեկ այլ՝ փոխարինող միջնորդ դատավոր: Եթե կողմերը

չեն ընտրել փոխարինող միջնորդ դատավորին, նոր միջնորդ դատավորը նորից նշանակվում կամ ընտրվում է: Եթե կողմերը ընտրում են նախկին միջնորդ դատավորին, ապա նախկին միջնորդ դատավորը, նոր դատավոր ընտրելու անհնարինության մասին կողմերին ծանուցելուց հետո 5 օրվա ընթացքում, պետք է ընտրի նոր միջնորդ դատավոր: Եթե նախկին միջնորդ դատավորը նշանակված է եղել Դատարանի նախագահի կողմից, այդ դեպքում նոր միջնորդ դատավորին նշանակում է Դատարանի նախագահը:

2. Անհրաժեշտության դեպքում Դատարանի նոր կազմը նորից քննում է այն բոլոր հարցերը, որոնք քննվել են Դատարանի նախկին կազմի կողմից:

Հոդված 53. Միջնորդ քննության կոնֆիդենցիալությունը (գաղտնիությունը)

1. Վեճը լուծվում է Դատարանի դռնփակ նիստում, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ:
2. Եթե կողմերի համաձայնությամբ այլ բան սահմանված չէ, ապա դատական նիստին Դատարանի կազմից և կողմերի ներկայացուցիչներից բացի կարող է ներկա գտնվել նաև դատական նիստի քարտուղարը:
3. Միջնորդ դատավորները, քարտուղարները և Դատարանի մյուս աշխատողները պարտավոր են գաղտնի պահել լուծվող վեճի մասին տեղեկատվությունը: Նրանք պատասխանատվություն են կրում գործի վարույթի ընթացքում իրենց հայտնի դարձած ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիքի հրապարակման համար:

Հոդված 54. Կողմերի մասնակցությունը

1. Կողմերը Դատարանում կարող են հանդես գալ ինչպես անձամբ, այնպես էլ իրենց հայեցողությամբ նշանակվող ներկայացուցիչների միջոցով: Ներկայացուցչի լիազորությունները պետք է հաստատվեն լիազորագրով, բացառությամբ իրավաբանական անձի ղեկավարի, որը պարտավոր է ներկայացնել իր պաշտոնական դրությունը և կողմին առանց լիազորագրի ներակայացնելու իրավունքը հավաստող փաստաթղթեր: Եթե կողմին ներկայացնում է փաստաբանը, ապա նրա լիազորությունները պետք է հաստատվեն փաստաբանական գործունեության արտոնագրով:
2. Գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ կարգով ծանուցված կողմի չներկայանալը չի խոչընդոտում գործի քննությանը: Կողմը իրավունք ունի Դատարանին խնդրել վեճը լուծել իր բացակայությամբ՝ ներկայացված փաստաթղթերի և նյութերի հիման վրա, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան սահմանված չէ:
3. Կողմերը կարող են համաձայնություն կայացնել գործի քննությունը կողմերի ներկայացրած գրավոր փաստաթղթերի և նյութերի հիման վրա իրականացնելու վերաբերյալ՝ առանց բանավոր քննություն անցկացնելու: Այդ դեպքում Դատարանը գործը քննում է ներկայացված փաստաթղթերի հիման վրա: Եթե ներկայացված գրավոր փաստաթղթերն ու նյութերը բավարար չեն գործն ըստ էության լուծելու համար, Դատարանը կարող է նշանակել գործի բանավոր քննություն:

Հոդված 55. Հաշտության համաձայնություն

1. Միջնորդ դատավարության ցանկացած փուլում կողմերն իրավունք ունեն կայացնել հաշտության համաձայնություն: Դատարանն օգտագործում է բոլոր հնարավորությունները կողմերի՝ հաշտության համաձայնություն կնքելուն նպաստելու համար:
2. Դատարանը որոշում է ընդունում հաշտության համաձայնությունը հաստատելու մասին, եթե կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը չի հակասում օրենքներին կամ այլ նորմատիվ իրավական ակտերին և չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը:
3. Հաշտության համաձայնություն կնքվելու դեպքում Դատարանի վճիռը պետք է պարունակի հաշտության համաձայնության բառացի տեքստը:

Հոդված 56. Հակընդդեմ հայց

1. Պատասխանողն իրավունք ունի մինչև գործով վճիռ կայացնելը հակընդդեմ հայց հարուցել ընդդեմ հայցվորի այն դեպքում, երբ հակընդդեմ հայցի և հայցվորի պահանջների միջև առկա է փոխադարձ կապ, ինչպես նաև այն դեպքում, երբ հակընդդեմ հայցը Դատարանի կողմից կարող է քննվել միջնորդ համաձայնությանը համապատասխան:
2. Հակընդդեմ հայցն հարուցվում է հայց հարուցելու ընդհանուր կանոններով:
3. Պատասխանողն իրավունք ունի ՀՀ քաղաքացիական օրենսդրությանը համապատասխան պահանջել հակընդդեմ հայցի քննությունը՝ սույն կանոնակարգի պահանջների պահպանմամբ:

Հոդված 57. Ապացույցները

1. Յուրաքանչյուր կողմ պետք է ապացուցի այն հանգամանքները, որոնք նա վկայակոչում է որպես իր պահանջների և առարկությունների հիմք: Դատարանը կարող է առաջարկել ներկայացնել այլ ապացույցներ, կանչել վկաներ, նշանակել փորձաքննություն: Եթե կողմը Դատարանին չի ներկայացրել ապացույցներ դատական քննության ընթացքում, ապա նա զրկվում է իր բացատրությունները՝ Դատարանին չներկայացրած ապացույցներով հիմնավորելու իրավունքից:
2. Գրավոր ապացույցները ներկայացվում են բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենի ձևով:

Հոդված 58. Ապացույցների գնահատումը

Ապացույցների գնահատումը իրականացվում է Դատարանի կողմից: Որևէ ապացույց Դատարանի համար նախապես հաստատված ապացույցի ուժ չունի՝ բացի սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի: Դատարանը բոլոր ապացույցները գնահատում է գործով բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա՝ իր ներքին համոզմամբ:

Հոդված 59. Ապացուցման պարտականությունից ազատվելը

1. Կողմերն ազատվում են հանրահայտ հանգամանքները ապացուցելու պարտականությունից:
2. Կողմերն ազատվում են այն հանգամանքներն ապացուցելու պարտականությունից, որոնք դատական նիստի ընթացքում հաստատված են ճանաչում երկու կողմերը, ինչպես նաև, եթե այդպիսի ճանաչումը ամրագրված է գործի հետ կապված փաստաթղթերում:
3. Նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած ընդհանուր իրավասության (պետական) դատարանի վճռով հաստատված հանգամանքները Դատարանում այլ գործ կրկին քննելիս կրկին չեն ապացուցվում:
4. Քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճիռը պարտադիր է Դատարանի համար միայն այն փաստերով, ըստ որոնց հաստատված են որոշակի գործողություններ և դրանք կատարած անձինք:
5. Դատարանն իր որոշման մեջ շարադրում է այն բոլոր հանգամանքները, որոնք նա ճանաչել է ապացուցման ոչ ենթակա՝ նշելով նաև իր հետևությունների հիմքերը:

Հոդված 60. Վկաների ցուցմունքները

Վկաների ցուցմունքների օգնությամբ ապացուցումը թույլատրվում է միայն այն դեպքում, եթե այլ ապացույցներով ինչ-որ հանգամանք հնարավոր չէ հաստատել: Դատական նիստի ընթացքում ներկայացված վկաների ցուցմունքները ամրագրվում են դատական նիստի արձանագրության մեջ:

Հոդված 61. Փորձաքննություն նշանակելը

1. Վեճի լուծման ժամանակ ծագած հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով Դատարանը կարող է փորձաքննություն նշանակել կողմի (կողմերի) միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ:
2. Կողմերն իրավունք ունեն դատարանին առաջադրել հարցեր, որոնք ենթակա են պարզաբանման փորձաքննության ընթացքում:
   Փորձաքննություն նշանակելու մասին Դատարանը կայացնում է որոշում, որում սահմանվում են հարցերի ցանկը և բովանդակությունը:
3. Կողմերն իրավունք ունեն Դատարանին առաջարկել փորձագետների թեկնածություններ և փորձագետներին տալ հարցեր՝ գիտելիքների համապատասխան բնագավառում նրանց գիտակ լինելը պարզելու նպատակով:
   Փորձագետ նշանակելու մասին Դատարանը կայացնում է որոշում:
4. Կողմի միջնորդությամբ նշանակված փորձաքննության հետ կապված ծախսերը վճարում է այդ կողմը:
5. Դատարանի կամ կողմերի նախաձեռնությամբ նշանակված փորձաքննության հետ կապված ծախսերը կատարվում են դատական ծախսերի հաշվին՝ սույն կանոնադրությանը համապատասխան:

Հոդված 62. Ապացույցներ ներկայացնելը

1. Կողմերն իրավունք ունեն դատական նիստի ընթացքում ներկայացնել ապացույցներ նույնիսկ այն դեպքում, երբ պատշաճ ձևով ծանուցված կողմը չի ներկայացել դատական քննությանը: Այդ դեպքում համապատասխան ապացուցները ներկայացրած կողմը պարտավոր է ներկայացրած ապացույցները ուղարկել նաև մյուս կողմին, եթե վերջինի մոտ դրանք բացակայում են: Դատարանն իրավունք ունի իր նախաձեռնությամբ մյուս կողմին ուղարկել նրա մոտ բացակայող ապացույցների պատճենները:

2. Եթե կողմը չի կարող ներկայացնել իր պահանջները հիմնավորող, իսկ պատասխանողը՝ հերքող ապացույցներ, Դատարանը կարող է ապացույցներով չհաստատված հայցային պահանջների մասով գործը թողնել առանց քննության: Հայցի մնացած մասով Դատարանը կարող է որոշում կայացնել ըստ էության:

V. ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎՃՌԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ, ԿԱՏԱՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

Հոդված 63. Միջնորդ դատավարությունն ավարտելը

Միջնորդ դատավարությունը ավարտվում է դատարանի կողմից միջնորդ դատավարությունը ավարտելու մասին գործով որոշում կայացնելով:

Հոդված 64. Գործի վարույթը կարճելը

Դատարանը որոշում է կայացնում գործի վարույթը կարճելու մասին, եթե՝

1) վեճը ենթակա չէ միջնորդ դատարանի քննությանը.
2) հայցվորը հրաժարվել է հայցից.
3) կողմ-իրավաբանական անձը լուծարվել է.
4) կողմ-քաղաքացին մահացել է.
5) կողմերը կնքել են հաշտության համաձայնություն:

Գործի վարույթը կարճելու դեպքում հայցվորն իրավունք ունի կրկին անգամ դիմել Դատարան նույն պահանջներով, եթե գործի քննությունը հնարավոր է միջնորդ դատարանում, և եթե գործի վարույթի կարճման կապակցությամբ կողմերը համաձայնություն չեն կայացրել կրկին անգամ միջնորդ դատարանին դիմելու անհնարինության մասին:

Հոդված 65. Վճիռ կայացնելու կարգը

Եթե Դատարանը գտնում է, որ գործի բոլոր հանգամանքները բացահայտված են, գործի քննությունը հայտարարում է ավարտված և հեռանում է խորհրդակցական սենյակ՝ վճիռ կայցնելու: Վճիռը կայացվում է դռնփակ նիստում՝ դատավորների ձայների մեծամասնությամբ: Դատարանի կազմի մեծամասնության որոշման հետ համաձայն չլինելու դեպքում դատավորն իրավունք ունի գրավոր շարադրել գործի վերաբերյալ իր հատուկ կարծիքը: Եթե կողմերի համաձայնությամբ այլ բան սահմանված չէ, Դատարանի վճիռը համարվում է վերջնական և ենթակա չէ բողոքարկման:

Հոդված 66. Գործի քննության հետաձգումը և կասեցումը

Անհրաժեշտության դեպքում կողմերի դիմումով կամ դատական կազմի նախաձեռնությամբ դատական նիստը կարող է հետաձգվել կամ կասեցվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված հիմքերով և կարգով: Միջնորդ քննության

հետաձգման կամ կասեցման համար հիմք հանդիսացող հանգամանքները վերանալուց հետո միջնորդ քննությունը համապատասխանաբար շարունակվում կամ վերսկսվում է:

Հոդված 67. Վճռի կայացումը հետաձգելը

Դատարանի կազմը կարող է հետաձգել վճռի կայացումը, եթե վճռի եզրափակիչ մասը դեռ չի հայտարարվել կողմերին:

Հոդված 68. Միջնորդ դատարանի վճռի բովանդակությունը

1. Դատարանի վճռում նշվում են՝
   1) վճռի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը.
   2) Դատարանի կազմը.
   3) կողմերի միջնորդ համաձայնությունը, որի հիման վրա գործել է Դատարանը.
   4) կողմերի անունը (անվանումը) հասցեն.
   5) վեճի էության համառոտ շարադրանքը.
   6) Դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները.
   7) ապացույցները, որոնց վրա հիմնված են Դատարանի հետևությունները.
   8) այն օրենքները և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է Դատարանը վճիռ կայացնելիս.
   9) հայցվորի պահանջները բավարարելու կամ մերժելու մասին Դատարանի եզրահանգումները.
   10) միջնորդ դատավարության ծախսերը, դրանց բաշխումը կողմերի միջև.
   11) վճռի կատարման ժամկետը և կարգը:
2. Դատարանի վճիռը պետք է ստորագրվի բոլոր դատավորների կողմից, ներառյալ նրանց, որոնք գործի վերաբերյալ ունեն հատուկ կարծիք: Եթե դատական կազմի ներկայացուցիչներից մեկը, համաձայն է կայացված վճի հետ, սակայն չի կարող այն հաստատել իր ստորագրությամբ, ապա նրա համաձայնությունը հաստատում է Դատարանի նախագահը՝ մատնանշելով այն պատճառը, որի հիմքով վճիռը չի ստորագրվել անձամբ տվյալ դատավորի կողմից:

Հոդված 69. Վճռի հրապարակումը

Միջնորդ քննության բանավոր փուլի ավարտից հետո Դատարանը վճռի եզրափակիչ մասը հայտարարում է կողմերին: Դատարանը պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցները՝ հիմնավորված վճռի ամբողջական տեքստը կողմերին ուղարկելու ուղղությամբ՝ դրա եզրափակիչ մասը կողմերին հայտարարելուց հետո 10-օրյա ժամկետում:

Հոդված 70. Լրացուցիչ վճիռը: Վճռի պարզաբանումը և ուղղումը

1. Դատարանն իրավունք ունի լրացուցիչ վճիռ կայացնել, եթե՝
   ա) որևէ պահանջով, որով կողմերն ապացույցներ են ներկայացրել, վճիռ չի կայացվել.
   բ) Դատարանը, լուծելով իրավունքի մասին հարցը, չի նշել հատկացված գումարի չափը կամ հանձնման ենթակա գույքը.
   գ) չի լուծվել միջնորդ դատավարության ծախսերի հարցը:
2. Միջնորդ դատարանն իրավունք ունի պարզաբանել վճիռը կամ ուղղել թույլ տված վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալները՝ չփոփոխելով վճռի էությունը և բովանդակությունը:
4. Կողմերը լրացուցիչ վճիռ կայացնելու կամ վճիռը պարզաբանելու և ուղղելու պահանջ կարող են ներկայացնել մինչև միջնորդ դատարանի վճռի կատարումը:
5. Լրացուցիչ վճռի կայացման կապակցությամբ ստացված դիմումը ուսումնասիրվում է դատական նիստում Դատարանի նույն կազմի կողմից՝ դիմումի ստացման օրվանից հետո 10-օրյա ժամկետում: Կողմերը պատշաճ ձևով տեղեկացվում են նիստի ժամանակի և վայրի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ դիմումի քննության համար:
6. Դիմումի քննության արդյունքում Դատարանը կայացնում է նախկին վճռի բաղկացուցիչ մաս հանդիսացող վճիռ կամ իր որոշմամբ մերժում է լրացուցիչ վճիռ կայացնելու մասին կողմի դիմումը:

Հոդված 71. Դատարանի վճռի վերանայումը նոր երևան եկած հանգամանքների հետևանքով

1. Դատարանն իր կայացրած վճիռը մինչև դրա կատարումը կարող է վերանայել նոր երևան եկած հանգամանքների հետևանքով:
2. Նոր երևան եկած հանգամանքների հետևանքով Դատարանի վճիռը վերանայվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված հիմքերով:
3. Նոր երևան եկած հանգամանքների հետևանքով Դատարանի վճիռը վերանայելու մասին կողմի դիմումը քննվում է Դատարա-

նի նիստում: Կողմերը պատշաճ ձևով տեղեկացվում են նիստի ժամանակի և վայրի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ դիմումի քննության համար:

4. Դատարանը, քննելով նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վճիռը վերանայելու մասին կողմի դիմումը, իրավունք ունի վերացնել վճիռը կամ մերժել դրա վերանայումը:
5. Վճիռը վերացնելու դեպքում Դատարանը գործը քննում է սույն կանոնակարգով սահմանված կանոններով:
6. Կողմն իրավունք ունի հայց հարուցել առաջին ատյանի դատարան, եթե՝
   1) Դատարանը մերժել է վճռի վերանայումը նոր երևան եկած հանգամանքների հետևանքով.
   2) Դատարանի վճռի կատարումից հետո ի հայտ են եկել նոր երևան եկած հանգամանքներ.
   3) անհնար է գործի քննությունը նույն միջնորդ դատարանում:

Հոդված 72. Միջնորդ դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելը և դրա կատարման կարգը

1. Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:
2. Կողմերը պարտավոր են կատարել Դատարանի վճիռը դրանում նշված ժամկետներում: Դատարանի վճիռը կատարվում է կամավոր:
3. Սահմանված ժամկետում և կարգով վճիռը չկատարվելու դեպքում կողմն իրավունք ունի դիմել միջնորդ դատարանի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան՝ միջնորդ դատարանի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ ստանալու պահանջով:

Հոդված 73. Կատարողական թերթ տալը մերժելու հիմքերը

Առաջին ատյանի դատարանն իրավունք ունի մերժել Դատարանի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը, եթե՝

1) վեճը ենթակա չէ միջնորդ դատարանի քննությանը.
2) Դատարանի կազմավորման կարգը չի համապատասխանում կողմերի միջնորդ համաձայնությանը.
3) կողմը, ընդդեմ որի կայացվել է Դատարանի վճիռը, պատշաճ ձևով չի տեղեկացվել գործի քննության ժամանակի և վայրի մասին.
4) Դատարանի վճիռը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին և քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող այլ օրենքներին ու իրավական ակտերին, եթե կողմերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ կամ իրավաբանական անձինք, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք են.
5) Դատարանի վճիռը չի համապատասխանում կողմերի միջնորդ համաձայնությամբ կիրառման ենթակա այլ պետության քաղաքացիական իրավունքի նորմերին, եթե նրանցից թեկուզ մեկն օտարերկրյա անձ է:

Հոդված 74. Գործերը պահելը

Դատարանում քննված գործը պահվում է Դատարանի արխիվում 5 տարի ժամկետով:

2. ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՎՈՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1.1. Կանոնագրքի կարգավորման առարկան

1.1.1. «Միջնորդ դատավորի վարքագծի կանոնագիրքը» (այսուհետ տեքստում՝ կանոնագիրք) կոչված է ամրապնդելու միջնորդ դատավորի մասնագիտական գործունեության իրավական հիմքերը, բարձրացնելու նրա պատասխանատվությունը իր ծառայողական գործունեության նկատմամբ: Կանոնագրքի հիմնական նպատակը միջնորդ դատավորի գործունեության ուղեցույց ծառայելն է:

1.1.2. Սույն կանոններին հիմնվելով՝ միջնորդ դատավորը պետք է ձգտի ամրապնդել հասարակության վստահությունը միջնորդ դատարանի՝ որպես վեճերի կարգավորման այլընտրանքային տարբերակի նկատմամբ:

1.1.3. Սույն կանոնները տարածվում են «X» Կազմակերպությանն առընթեր մշտապես գործող միջնորդ դատարանի դատավորների վրա:

Հոդված 1.2. Միջնորդ դատավորի գործունեության սկզբունքները

1.2.1. Միջնորդ դատավորը իր ծառայողական գործունեության ընթացքում պետք է առաջնորդվի կամավորության, անկախության, անկողմնակալության, կողմերի իրավահավասարության ու մրցակցության և գաղտնիության սկզբունքներով:

Հոդված 1.3. Կամավորության սկզբունք

1.3.1. Կամավորությունը հանդիսանում է միջնորդ քննության (գործընթացի) հիմնական սկզբունք: Այն հիմնվում է կողմերի՝ իրենց միջև առկա վեճը միջնորդ դատարանի քննությանը հանձնելու, միջնորդ դատարանում վեճի քննությանը մասնակցելու կամ գործին իրենց մասնակցությունը դադարեցնելու կամավոր ցանկության վրա, ինչպես նաև կողմերի՝ առանց պարտադրանքի կամավոր կերպով հաշտության համաձայնության գալու վրա:

Հոդված 1.4. Անկախության սկզբունք

1.4.1. Իր ծառայողական գործունեությունն իրականացնելիս միջնորդ դատավորն անկախ է և ենթարկվում է միայն օրենքին: Միջնորդ դատավորը հաշվետու չէ որևէ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի առջև:

1.4.2. Արգելվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, կուսակցությունների և հասարակական միավորումների, լրատվության միջոցների միջամտությունը միջնորդ դատավորի գործունեությանը:

Հոդված 1.5. Անկողմնակալության սկզբունք

1.5.1. Միջնորդ դատավորը կարող է ընդունել գործը և մասնակցել գործի քննությանը, եթե նա կարող է (ի վիճակի է) պահպանել իր անկողմնակալությունը: Միջնորդ դատավորը պետք է խուսափի կանխակալության կամ կողմնակալության ցանկացած դրսևորումից:

1.5.2. Միջնորդ դատավորը մինչև գործի քննությունը պարտավոր է միջնորդ դատարանին և կողմերին հայտնել այն հանգամանքների մասին, որոնք կարող են կասկած հարուցել նրա անկախության և անաչառության վերաբերյալ:

1.5.3. Անձը, որը ազգակցական, ծառայողական (գործնական) կամ անձնական կապերի մեջ է գտնվում կողմերից որևէ մեկի կամ նրանց ներկայացուցիչների հետ, կամ այլ կերպ ուղղակի կամ անուղղակի կերպով շահագրգռված է գործի ելքով, չի կարող տվյալ գործով լինել միջնորդ դատավոր:

1.5.4. Միջնորդ դատավորի բացարկման հիմքերն ու կարգը սահմանվում են օրենքով և միջնորդ դատարանի կանոնադրությամբ:

1.5.5. Միջնորդ դատավորը կարող է հրաժարվել վարելու միջնորդության գործը, եթե ըստ նրա գնահատման և էթիկական ընկալման, միջնորդության գործը արդարացի չի ընթանում:

Հոդված 1.6. Կողմերի հավասարության և մրցակցության սկզբունք

1.6.1. Միջնորդ դատավորը գործի քննությունն ու լուծումը իրականացնում է կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքի հիման վրա: Միջնորդ դատավորը յուրաքանչյուր կողմին պետք է հավասար հնարավորություն ընձեռի ներկայացնելու և հիմնավորելու իր դիրքորոշումը, պաշտպանելու և իրականացնելու իր իրավունքներն ու օրինական շահերը:

Հոդված 1.7. Գաղտնիության սկզբունք

1.7.1. Միջնորդ դատավորը պարտավոր է գաղտնի պահել լուծվող վեճի մասին իրեն հայտնի դարձած տեղեկատվությունը և պատշաճ կերպով պահպանել գործին առնչվող բոլոր փաստաթղթերը: Նույնը վերաբերում է նաև միջնորդ դատավորների օգնականներին, ինչպես նաև այն անձանց, ովքեր ուսուցանվում են միջնորդ դատավորի կողմից:

1.7.2. Միջնորդական ծառայությունները դադարեցնելուց հետո միջնորդ դատավորը չի ազատվում տեղեկությունների գաղտնիությունը պահպանելու պարտավորությունից, որոնք վերաբերում են իր միջնորդական գործունեությանը: Նա պատասխանատվություն է կրում գործի վարույթի ընթացքում իրենց հայտնի դարձած ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիքի հրապարակման համար:

1.7.3. Միջնորդ քննության վերաբերյալ տեղեկությունները գաղտնի պահելը միջնորդ դատավորի նկատմամբ վստահության ձևավորման կարևորագույն գրավականն է: Ստացված տեղեկությունները կարող են հրապարակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

2. ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՎՈՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՏԻՎՆ ՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 2.1. Միջնորդ դատավորի մասնագիտական ու անձնական պատիվն ու արժանապատվությունը

2.1.1. Իր անձի և հասարակության նկատմամբ բարոյական համարժեք վարքագիծ դրսևորելու միջոցով միջնորդ դատավորը պարտավոր է բարձր պահել իր մասնագիտական և անձնական պատիվն ու արժանապատվությունը, զերծ մնալ այնպիսի արարքներից, որոնք կարող են ստվեր գցել նրա հեղինակության, կոչման վրա և խաթարել հասարակության վստահությունը միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության նկատմամբ:

2.1.2. Միջնորդ դատավորը պարտավոր է անշեղորեն հետևել միջնորդ դատավորի էթիկայի նորմերին: Այն դեպքում, երբ մասնագիտական էթիկայի խնդիրները չեն կարգավորվում օրենքով կամ սույն կանոնագրքով, միջնորդ դատավորը պարտավոր է ղեկավարվել միջնորդական քննության պրակտիկայում ձևավորված ավանդույթներով և սովորույթներով, որոնք համապատասխանում են հասարակության մեջ ձևավորված բարոյականության սկզբունքին:

Հոդված 2.2. Միջնորդ դատավորի բարոյական պարտականությունները

2.2.1. Միջնորդ դատավորի բարոյական պարտականություններն են.

ա/ Միջնորդ դատավորը իր գործունեությունը իրականացնելիս պարտավոր է լինել ինքնուրույն, անկախ ու սկզբունքային, պահպանել գործարար փոխհարաբերության բարոյական վարքագիծը:

բ/ Միջնորդ դատավորը չպետք է կեղծ և մոլորության մեջ գցող տեղեկատվություն հաղորդի իր անձի և իր կողմից մատուցվող ծառայությունների մասին: Նա պետք է զերծ մնա ինքնագովազդից: Միջնորդ դատավորը իրավունք ունի համապատասխան ձևով իր գործունեության վերաբերյալ տեղեկատվություն հրապարակել: Միջնորդ դատավորը պետք է ձեռնպահ մնա այնպիսի հրապարակայնությունից, որը կարող է միջնորդության վերաբերյալ սխալ պատկերացումների ձևավորման աղբյուր հանդիսանալ: Միջնորդ դատավորը չպետք է տվյալ վեճի առնչությամբ խորհրդատվություն տրամադրի կողմերին կամ արտահայտի իր կարծիքը գործի որևէ հանգամանքի վերաբերյալ: Նա կարող է միայն օժանդակել կողմերին փոխադարձ համաձայնության գալու գործում:

գ/ Միջնորդ դատավորի հիմնական պարտականությունը պետք է լինի այնպիսի պայմաններ ստեղծելն ու պահպանելը, որոնք կնպաստեն կողմերի հարաբերությունների բարելավմանը և նրանց մեջ առկա հակասության լուծմանը: Սա միջնորդ դատավորից բարձր պրոֆեսիոնալիզմ և միջնորդության գործի վերաբերյալ լավատեղյակություն է պահանջում: Միջնորդ դատավորը պետք է ընդունի գործը միայն այն դեպքում, երբ նրա որակավորումը համապատասխանում է միջնորդ դատավորների ուսուցման չափորոշիչներին:

դ/ Միջնորդության գործի (միջնորդ քննության) ընթացքում միջնորդ դատավորը պետք է կողմերին տեղեկացնի իր որակավորման, ինչպես նաև մասնագիտական հմտությունների և փորձի մասին: Միջնորդ դատավորը պարտավոր է մշտապես կատարելագործել իր մասնագիտական ունակությունները և հարստացնել իր գիտելիքներն իրավաբանության և համապատասխան մասնագիտության ոլորտում:

ե/ Միջնորդ դատավորը պետք է լինի համբերատար, օժտված լինի անձնական արժանապատվության խորը զգացումով: Նա պարտավոր է հարգանքով վերաբերվել կողմերին, նրանց ներկայացուցիչներին, փաստաբաններին և այլ անձանց, որոնք մասնակցում են գործի քննությանը:

զ/ Միջնորդ դատավորը չի կարող զբաղվել այնպիսի գործունեությամբ, որը կարող է վնասել նրա հեղինակությունը, բարի համբավն ու արժանապատվությունը:

2.2.2. Միջնորդ դատավորի դերը անհամատեղելի է այնպիսի գործունեության, զբաղմունքի կամ գործողությունների (անգործության) հետ, որոնք կարող են խանգարել վարքագծի սույն կանոնների պահպանմանը:

Հոդված 2.3. Միջնորդ դատավորի վարքագիծը միջնորդ քննության ընթացքում

2.3.1. Միջնորդ քննությունը (միջնորդության գործընթացը) պետք է սկսվի միայն հայցվորի կողմից հայց հարուցելու դեպքում:

2.3.2. Միջնորդ քննությունը (միջնորդության գործը) կարող են վարել մեկ կամ մի քանի միջնորդ դատավորներ: Միջնորդության գործի ժամանակ կարող են անցկացվել մեկ կամ ավելի նիստեր: Յուրաքանչյուր նիստի անցկացման ժամանակի և տեղի վերաբերյալ որոշումը միջնորդ դատավորի (միջնորդ դատավորների) կողմից պետք է ընդունվի կողմերից յուրաքանչյուրի հետ պայմանավորվելուց (քննարկելուց) հետո:

2.3.3. Միջնորդ դատավորը չպետք է ավելորդ կամ անհիմն կերպով ձգձգի նիստը, երբ ակնհայտ է, որ տվյալ գործը չի համապատասխանում միջնորդության պահանջներին կամ մասնակիցները չեն կամենում կամ չեն կարող մասնակցել միջնորդ քննությանը:

2.3.4. Կողմերը միջնորդ քննությանը մասնակցում են անձամբ: Նրանք կարող են գործին մասնակցել նաև ներկայացուցչի, ներառյալ նաև իրավաբանի (փաստաբանի) միջոցով: Միջնորդ դատավորը իրավունք չունի կողմերին զրկել այս իրավունքից կամ սահմանափակել դրա իրականացումը:

2.3.5. Միջնորդ դատավորը կարող է տեղեկատվություն տրամադրել կողմերին, սակայն նա չի կարող որևէ կողմին խորհուրդ տալ կամ իր կարծիքն արտահայտել տվյալ գործի առնչությամբ: Նա պետք է կողմերին տեղեկացնի փաստաբանի կամ ցանկացած այլ համապատասխան փորձագետի հետ

խորհրդակցելու հնարավորության մասին:

2.3.6. Այն դեպքում, երբ անհրաժեշտ է հատուկ փորձաքննություն, և կողմերը համաձայն են փորձաքննության նշանակմանն ու անցկացմանը, գործին կարող են մասնակցել նաև փորձագետներ, որոնք ստորագրությամբ ծանուցվում են միջնորդության գործի սկզբունքների, իրենց իրավունքների և պարտականությունների մասին:

2.3.7. Միջնորդության գործի առաջին նիստի սկզբում միջնորդ դատավորը պետք է կողմերին ներկայացնի միջնորդության գործի բնույթը, միջնորդ դատավորի և կողմերի դերը, նրանց իրավունքներն ու պարտականությունները միջնորդության գործում:

2.3.8. Համոզվելով, որ կողմերի համար պարզ է միջնորդության բնույթն ու նշանակությունը, միջնորդ դատավորը պետք է խնդրի կողմերի բանավոր կամ գրավոր համաձայնությունը միջնորդ քննությունը շարունակելու համար:

2.3.9. Միջնորդ դատավորը կարող է յուրաքանչյուր կողմի հետ փակ քննարկում անցկացնել՝ չխախտելով կողմերի հավասարության, մրցակցության և գաղտնիության սկզբունքները:

2.3.10. Կողմերից յուրաքանչյուրը կարող է ցանկացած ժամանակ առանց պատճառներ ներկայացնելու հրաժարվել միջնորդության գործին մասնակցելուց: Սակայն կողմերը պարտավոր են պահպանել մինչև միջնորդության գործի տվյալ պահը իրենց հայտնի դարձած ցանկացած հանգամանքի կամ փաստաթղթի գաղտնիությունը:

2.3.11. Կողմերը կարող են ազատել (հրաժարական հայտնել) միջնորդ դատավորին: Այդ դեպքում ազատված միջնորդ դատավորը պետք է նոր միջնորդ դատավորին տեղեկացնի միջնորդության գործընթացի ընթացքի մասին: Դա չի ներառում համատեղ, ինչպես նաև փակ հանդիպումների ժամանակ ստացված տեղեկությունները:

2.3.12. Միջնորդ դատավորը պետք է ապահովի այնպիսի պայմանների առկայություն, որոնք նպաստավոր են կողմերի միջև անկաշկանդ շփումներ իրականացնելու համար և որը հիմնված է նրանց հետքրքրությունների նկատմամբ փոխադարձ հարգանքի վրա: Միջնորդ դատավորը պետք է օգնի կողմերին բացահայտելու վեճի էությունը, որոշելու փոխադարձաբար ընդունելի լուծումներ և կնքելու հաշտության համաձայնություն:

3. ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՎՈՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 3.1. Միջնորդ դատավորը և հասարակությունը

3.1.1. Միջնորդ դատավորը պարտավոր է խստագույնս պահպանել էթիկայի եւ բարոյականության նորմերը:

3.1.2. Միջնորդ դատավորին արգելվում է հրապարակայնորեն ցանկացած ձևով անհարգալից վերաբերմունք արտահայտել օրենքի, իրավունքի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի նկատմամբ: Հավասարապես արգելվում են բոլոր այն գործողությունները, որոնք կարող են վնասել միջնորդ դատարանի հեղինակությունը:

Հոդված 3.2. Միջնորդ դատավորի՝ միայն օրենքով ղեկավարվելու և միջնորդ դատավորի կոչումը բարձր պահելու պարտականությունը

3.2.1. Միջնորդ դատավորը իրեն հանձնված գործեր լսելիս պարտավոր է խստիվ ղեկավարվել օրենքով, ապահովել անձանց՝ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը:

3.2.2. Միջնորդ դատավորը դատարանում իր պարտականությունները կատարելիս, ինչպես նաև արտածառայողական հարաբերություններում պարտավոր է խուսափել այն ամենից, ինչը կարող է վնասել միջնորդ դատարանի հեղինակությանն ու միջնորդ դատավորի բարձր կոչմանը, կասկած հարուցել նրա անաչառության եւ անկողմնակալության նկատմամբ:

Հոդված 3.3. Միջնորդ դատավորի կողմից իր պարտականությունների բարեխիղճ կատարումը

3.3.1. Միջնորդ դատավորը պարտավոր է անշեղորեն և բարեխղճորեն կատարել իր պարտականությունները:

3.3.2. Որոշումներ ընդունելիս միջնորդ դատավորը պարտավոր է ելնել օրենսդրությամբ սահմանված իր մասնագիտական իրավասություններից: Նա իրավունք չունի ղեկավարվել անձնական, ընտանեկան կամ խմբակային շահերով: Միջնորդ դատավորը պարտավոր է լսել գործը և ընդունել անհրաժեշտ որոշում՝ պահպանելով որոշում ընդունելու՝ օրենքով սահմանված կարգն ու պայմանները:

3.3.3. Միջնորդ դատավորը անձնական պատասխանատվություն է

կրում իր որոշումների ճշտության և արդարացիության, իր պարտականությունների պատշաճ կատարման համար:

Հոդված 3.4. Միջնորդ դատավորի քաղաքական չեզոքությունը

3.4.1. Միջնորդ դատավորը պարտավոր է ձեռնպահ մնալ քաղաքական գործունեությունից:

3.4.2. Միջնորդ դատավորն իրավունք չունի զբաղեցնել պետական որևէ պաշտոն, հանդես գալ որևէ քաղաքական կազմակերպության (կուսակցության) կամ դրա թեկնածուի օգտին, հրապարակորեն պաշտպանել կամ դեմ հանդես գալ որևէ պաշտոնատար անձի կամ կուսակցության, գնահատականներ տալ որևէ քաղաքական կազմակերպության (կուսակցության), պաշտոնատար անձի կամ նրանց գործունեությանը:

3.4.3. Միջնորդ դատավորն իրավունք չունի մասնակցել որևէ քաղաքական գործունեության այլ կերպ, քան օրենքով սահմանված հիմքերով և կարգով:

Հոդված 3.5. Միջնորդ դատավորի գործունեության այլ սահմանափակումներ

3.5.1. Միջնորդ դատավորը պարտավոր է ձեռնպահ մնալ այնպիսի ֆինանսական և գործնական հարաբերություններից, որոնք կարող են ստվեր գցել միջնորդ դատավորի անկողմնակալության վրա, խոչընդոտել նրան դատական պարտականություններն ու միջնորդ դատավորի իր դերը իրականացնելիս, կաշկանդել նրան այն անձանց հետ հարաբերություններում, որոնք դիմել են կամ կարող են դիմել միջնորդ դատարան:

3.5.2. Միջնորդ դատավորը չպետք է օգտագործի իր դիրքը, միջնորդ դատարանի միջոցներն ու հնարավորությունները իր անձնական խնդիրների լուծման և անձնական պահանջների բավարարման նպատակներով:

Հոդված 3.6. Միջնորդ դատավորի գիտական մանկավարժական և ստեղծագործական գործունեությամբ զբաղվելու իրավունքը

3.6.1. Միջնորդ դատավորն իրավունք ունի զբաղվել գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքով: Նա իրավունք ունի կարդալ դասախոսություններ, հրապարակայնորեն ներակայացնել տարբեր հարցերի վերաբերյալ (այդ թվում՝ ոչ իրավական) գիտական վերլուծություններ, զբաղվել արվեստով, սպորտով, եթե նման գործունեությունը

չի նսեմացնում միջնորդ դատավորի պատիվն ու արժանապատվությունը, չի խոչընդոտում նրան իր հիմնական դատավարական պարտականություններն իրականացնելիս:

3.6.2. Միջնորդ դատավորն իրավունք ունի հանդիպումներ ունենալ պաշտոնատար անձանց և կազմակերպությունների հետ՝ իրեն հետաքրքրող իրավական խնդիրների քննարկման կամ խորհրդակցության նպատակով:

3.6.3. Միջնորդ դատավորն իրավունք ունի և պարտավոր է հոգ տանել իր մասնագիտական գիտելիքների մակարդակի և աշխատանքի որակի բարձրացման ուղղությամբ:

Հոդված 3.7. Միջնորդ դատավորի կողմից այլ պաշտոն զբաղեցնելու կամ այլ աշխատանք կատարելու իրավունքը

3.7.1. Միջնորդ դատավորը կարող է զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, եթե նրա այդ գործունեությունը չի խոչընդոտում միջնորդ դատավորի պարտականություններն անկողմնակալորեն և բարեխղճորեն կատարելուն:

3.7.2. Միջնորդ դատավորը կարող է զբաղվել իր դատավարական պարտականությունների հետ չկապված՝ օրենքով նախատեսված այլ գործունեությամբ, եթե այդ գործունեությունը չի խոչընդոտում միջնորդ դատավորի կողմից արդարացի և օրինական որոշում կայացնելուն այն գործով, որը հանձնված է նրա քննությանը:

Հոդված 3.8. Միջնորդ դատավորի հասարակական գործունեությամբ զբաղվելու իրավունքը

3.8.1. Միջնորդ դատավորը կարող է մասնակցել նաև բարեգործական և հասարակական գործունեությանը, եթե այդպիսի գործունեությունը չի խոչընդոտում միջնորդ դատավորին՝ կատարելու իր դատական պարտականությունները և չի ազդում նրա անկողմնակալության վրա: Միջնորդ դատավորը կարող է անդամակցել կրոնական, հասարակական կամ բարեգործական կազմակերպությունների, լինել այդ կազմակերպությունների ղեկավար, աշխատակից, իրավաբան/խորհրդատու, բացառությամբ այն դեպքերի, երբ կա հավանականություն, որ տվյալ միջնորդ դատավորը իր զբաղվածության (ծանրաբեռնվածության) պատճառով չի կարողանա բարեխղճորեն իրականացանել իր դատական պարտականությունները:

3.8.2. Միջնորդ դատավորը իրավունք չունի միջոցներ ձեռնարկել կրոնական, հասարակական կամ բարեգործական կազմակերպությունների համար ֆոնդեր հայթայթելու ուղղությամբ կամ այդ նպատակներով օգտագործել կամ թույլ տալ օգտագործելու իր հեղինակությունը:

4. ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՎՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հոդված 4.1. Միջնորդ դատավորի վարձատրությունը

4.1.1. Միջնորդ դատավորն իրավունք ունի իր աշխատանքի դիմաց ստանալ վարձատրություն (հոնորար):

4.1.2. Միջնորդ դատավորը չի կարող անցնել իր պարտականությունների կատարմանը, քանի դեռ կողմերը համաձայնություն չեն կայացրել միջնորդ դատավորի հոնորարի (վարձավճարի) վճարման գործընթացի վերաբերյալ:

4.1.3. Միջնորդ դատավորին վճարվող հոնորարը (վարձատրությունը) պետք է համաչափ լինի այդ նույն ծավալի աշխատանքը կատարող համապատասխան մասնագետին վճարվող վարձատրությանը:

4.1.4. Միջնորդ դատավորը իրավունք չունի հոնորարի պայմանական չափ որոշել կամ այն կապել գործի ելքի հետ: Հոնորարի չափն ու վճարման կարգը որոշվում են օրենքով և միջնորդ դատարանի կանոնադրությամբ:

Հոդված 4.2. Միջնորդ դատավորի՝ եկամուտների հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը

4.2.1. Միջնորդ դատավորը պարտավոր է պարբերաբար ներկայացնել իր եկամուտների հայտարարագիր՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

Հոդված 4.3. Միջնորդ դատավորի ծախսերի հատուցումը

Միջնորդ դատավորն իրավունք ունի պահանջել և ստանալ իր պարատականությունների իրականացման ընթացքում կատարված ծախսերի հատուցում:

4.3.1. Հատուցվող ծախսերի գումարը պետք է համապատասխանի դատավորի այն ծախսերին, որոնք նա կատարել է գործի լուծման համար անհրաժեշտ գործնական այցելությունների, այլ բնակավայրում օթևանելու, իր բնակության վայր ժամա-

նելու և իր ծառայողական պարտականություններն իրականացելիս կատարած այլ ծախսերը:

Հոդված 4.4. Միջնորդ դատավորի աշխատանքային պայմանները

1.7.1. Միջնորդ դատավորը պետք է ապահովված լինի պատշաճ աշխատանքային պայմաններով, որոնք թույլ կտան լիարժեք իրականացնել իր պարտականությունները:

Հոդված 4.5. Միջնորդ դատավորի հանդերձանքը դատական նիստի ընթացքում

4.5.1. Դատական նիստին դատավորը մասնակցում է սահմանված ձևի պատմուճանով (թիկնոցով), որը նրան տրամադրվում է անվճար: Պատմուճանի նկարագրությունը հաստատում է Կազմակերպությունը:

5. ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 5.1. Միջնորդ դատավորի պատասխանատվությունը

5.1.1. Միջնորդական գործունեություն իրականացնելիս «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» ՀՀ օրենքի, Միջնորդ դատարանի կանոնակարգի և սույն Կանոնագրքի պահանջները խախտելու դեպքում միջնորդ դատավորը կարող է ենթարկվել պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով:

II. ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐ

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ՄԻՋՆՈՐԴ ՎԵՐԱՊԱՀՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

1-ին տարբերակ

«Սույն պայմանագրից ծագող կամ պայմանագրի խախտմանը, լուծմանը, անվավերությանն առնչվող բոլոր վեճերը և տարաձայնությունները ենթակա են լուծման ---------- կազմակերպությանն առընթեր գործող Միջնորդ դատարանի կողմից՝ նրա կանոնադրությամբ սահմանված ընթացակարգերով: Միջնորդ դատարանի վճիռը վերջնական է և կողմերի համար ունի պարտադիր ուժ:

2-րդ տարբերակ

«Սույն պայմանագրից ծագող կամ պայմանագրի խախտմանը, լուծմանը, անվավերությանն առնչվող բոլոր վեճերը և տարաձայնությունները ենթակա են լուծման՝ կողմերի փոխհամաձայնությամբ ընտրված, մշտապես գործող և վեճի բնույթին համապատասխան մասնագիտացված միջնորդ դատարանի կողմից՝ նրա կանոնադրությամբ սահմանված ընթացակարգերով: Միջնորդ դատարանի վճիռը վերջնական է և կողմերի համար ունի պարտադիր ուժ:

3-րդ տարբերակ

«Սույն պայմանագրից ծագող կամ պայմանագրի խախտմանը, լուծմանը, անվավերությանն առնչվող բոլոր վեճերը և տարաձայնությունները ենթակա են լուծման միջնորդ դատարանի կողմից, որը ընտրվում է Կողմերի կողմից՝ «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության» մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով: Միջնորդ դատարանի վճիռը վերջնական է և կողմերի համար ունի պարտադիր ուժ:

2. ՄԻՋՆՈՐԴ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐ

ա) ՄԻՋՆՈՐԴ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՎԵՃԸ ՄՇՏԱՊԵՍ ԳՈՐԾՈՂ ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՐԱՆԻ ԼՈՒԾՄԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ, ք. Երևան «-----»----------2005թ.

«----------» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն ----------, ----------, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետև տեքստում Կողմ 1 և «----------» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն ----------, ----------, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետև տեքստում՝ Կողմ 2, համաձայնվում են.

1. Կողմերի միջև «----------»----------, 2004թ-ին կնքված կապիտալ շինարարության կապալի պայմանագրից բխող վեճի լուծումը հանձնել «----------» կազմակերպությանն առընթեր գործող միջնորդ դատարանի (այսուհետև տեքստում՝ միջնորդ դատարան) լուծմանը: Պայմանագրի պատճենը կցվում է սույն համաձայնագրին և համարվում է դրա անբաժանելի մասը:

2. Կողմերը համաձայնվում են հետևել միջնորդ դատարանի կանոնադրությանը և միջնորդ դատավարության ընթացակարգերին:

3. Կողմերը պարտավորվում են ընդունել միջնորդ դատարանի կանոնադրությամբ սահմանված կարգով նշանակված դատարանի կազմը, հետևել դատավորի ինքնաբացարկի և նրան բացարկ հայտնելու և դրա լուծման՝ միջնորդ դատարանի կանոնադրությամբ սահմանված կարգին:

4. Կողմերը պայմանավորվում են, որ միջնորդ դատարանի վճիռը վերջնական է տվյալ վեճի լուծման համար, ենթակա է կողմերի կողմից պարտադիր կատարման և Կողմերը հետագայում կհրաժարվեն նույն վեճը քննության առարկա դարձնել ՀՀ իրավասու դատարանում:

5. Կողմերի վավերապայմանները՝

ԿՈՂՄ 1	ԿՈՂՄ 2
«————» փակ բաժնետիրական ընկերություն, պետական գրանցման թիվ՝————, բանկային հհ————, հասցե————, հվհհհ————, գլխավոր տնօրեն՝	«————» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, պետական գրանցման թիվ՝————, բանկային հհ————, հասցե————, հվհհհ————, տնօրեն՝
Կ.Տ.	Կ.Տ.

բ) ՄԻՋՆՈՐԴ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՆԿՐԵՏ ՎԵՃԸ ԼՈՒԾՈՂ (AD HOC) ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՐԱՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՎԵՃԸ ԱՅԴ ԴԱՏԱՐԱՆԻ ԼՈՒԾՄԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ, ք. Երևան «-----»----------2005թ.

«----------» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն ----------, ----------, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետև տեքստում՝ Կողմ 1 և «----------» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն ----------, ----------, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետև տեքստում Կողմ 2, համաձայնվում են.

6. Կողմերի միջև «---------»----------, 2004թ-ին կնքված մատակարարման պայմանագրից բխող վեճի լուծման համար, վերոնշյալ պայմանագրի ---------- կետով սահմանված կարգով, ստեղծել միջնորդ դատարան: Պայմանագրի պատճենը կցվում է սույն համաձայնագրին և համարվում է դրա անբաժանելի մասը:

7. Կողմերը համաձայնվում են ստեղծել կոնկրետ վեճը լուծող (ad hoc) միջնորդ դատարան՝ հետևյալ պայմաններով.

ա) միջնորդ դատարանը կազմավորվում է երեք դատավորի կազմով, որոնցից մեկին նշանակում է Կողմ 1-ը, երկրորդին՝ Կողմ 2-ը, իսկ երրորդ դատավորին ընտրում են կողմերի կողմից նշա-

նակված դատավորները՝ փոխադարձ համաձայնությամբ,

բ) կողմերը պարտավորվում են դատավորներին նշանակել սույն համաձայնության կնքումից հետո՝ երեսնօրյա ժամկետում: Սույն ժամեկտում կողմերի կողմից դատավոր չնշանակելու դեպքում համարվում է, որ միջնորդ դատարան չի կազմավորվել և սույն համաձայնագիրը կորցնում է իր ուժը: Եթե վերոնշյալ ժամկետում դատավոր չի նշանակել կողմերից մեկը, ապա երեսնօրյա ժամկետը լրանալուց չորսօրյա ժամկետում երկրորդ դատավորին ընտրում է մյուս կողմի նշանակած դատավորը: Այնուհետև՝ երկու դատավորները մեկշաբաթյա ժամկետում նշանակում են երրորդ դատավորին: Դատավորները իրենց կազմից ընտրում են դատարանի նախագահ:

8. Գործը քննող միջնորդ դատավորը կարող է մինչև գործի քննությունն սկսելն ինքնաբացարկ հայտնել՝ գրավոր շարադրելով դրա հիմքերը: Գործի քննության ընթացքում ինքնաբացարկ հայտնել թույլատրվում է միայն այն դեպքում, երբ ինքնաբացարկի հիմքը միջնորդ դատավորին հայտնի է դարձել գործի քննությունն սկսելուց հետո:

9. Կողմերը կարող են միջնորդ դատավորին բացարկ հայտնել մինչև գործի քննությունն սկսելը՝ նրա անաչառության վերաբերյալ հիմնավոր կասկած հարուցող հանգամանքների առկայության դեպքում: Բացարկը հայտնվում է գրավոր, որում շարադրվում են դրա հիմքերը:

10. Գործի քննության ընթացքում բացարկ հայտնելը թույլատրվում է միայն այն դեպքում, եթե բացարկի հիմքը կողմին հայտնի է դարձել գործի քննությունն սկսելուց հետո:

11. Միջնորդ դատավորի ինքնաբացարկի եւ նրան հայտնված բացարկի հարցը լուծում է միջնորդ դատարանի կազմը՝ ինքնաբացարկ հայտնած դատավորի կամ այն դատավորի բացակայությամբ, որին բացարկ է հայտնվել:

12. Կողմերը համաձայնվում են դատարանին տրամադրել վեճի լուծման համար անհրաժեշտ նյութեր, փաստաթղթեր և դատարանի կողմից պահանջված այլ տեղեկություններ:

13. Կողմերը պայմանավորվում են, որ վեճի լուծման հետ կապված բոլոր ծախսերը, ներառյալ դատավորների վարձատրության, փորձաքննությունների իրականացման և այլ, կիրականացվեն հավասար մասնաբաժիններով:

14. Կողմերը պայմանավորվում են, որ միջնորդ դատարանի վճիռը վերջնական է տվյալ վեճի լուծման համար, ենթակա է կողմերի կողմից պարտադիր կատարման և Կողմերը հետագայում

կիրաժարվեն նույն վեճը քննության առարկա դարձնել << իրավասու դատարանում:

15. Կողմերի վավերապայմանները՝

ԿՈՂՄ 1	ԿՈՂՄ 2
«————» փակ բաժնետիրական ընկերություն, պետական գրանցման թիվ՝————, բանկային հ/հ————, հասցե————, հվհհ————, ղեկավար տնօրեն՝	«————» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, պետական գրանցման թիվ՝————, բանկային հ/հ————, հասցե————, հվհհ————, տնօրեն՝
Կ.Տ.	Կ.Տ.

3. ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ՀԱՅՑՎՈՐ՝ ----------

(անուն, անվանում, հասցե)

ՊԱՏԱՍԽԱՆՈՂ՝ ----------

(անուն, անվանում, հասցե)

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄ

Սույն թվականի մայիսի 15-ին Պատասխանողի հետ կնքվել է ---------- պայմանագիր՝ համաձայն որի Պատասխանողը պարտավորվել էր մինչև սույն թվականի օգոստոսի 15-ը ներառյալ մատուցել պայմանագրով նախատեսված ծառայությունները: Սակայն Պատասխանողը խախտել է պայմանագրի պայմանները, այն է.

ա) ----------
բ) ----------
գ) ----------
դ) ----------

Ուստի ելնելով վերոգրյալից պահանջում եմ.

ա) ----------
(նշել պահանջները)
բ) ----------
գ) ----------
դ) ----------

Վերոնշյալ պահանջները հիմնավորվում են հետևյալ ապացույցներով.

ա) ----------
(նշել պահանջները հիմնավորող ապացույցները)
բ) ----------
գ) ----------
դ) ----------

Պատասխանողի կողմից պայմանագրային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով հասցված ընդհանուր վնասը կազմում է ----------դրամ, որը ենթակա է գանձման Պատասխանողից:

Հայցադիմումին կցվում են՝

ա) պայմանագիրը, որի ---------- կետում առկա է կողմերի միջնորդ վերապահումը՝ պայմանագրից ծագող վեճերը ---------- միջնորդ դատարանին հանձնելու վերաբերյալ,
բ) ----------,
գ ----------,
դ) ----------,
ե) լիազորագիր:

ՀԱՅՑՎՈՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝
(ստորագրություն)

4. ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԻ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ՀԱՅՑՎՈՐ՝ ----------

(անուն, անվանում, հասցե)

ՊԱՏԱՍԽԱՆՈՂ՝ ----------

(անուն, անվանում, հասցե)

ՊԱՏԱՍԽԱՆ
(ըստ հայցի----------)

Սույն թվականի ---------- Հայցվորի կողմից հայց է հարուցվել *(ամիս, ամիսաթիվ)* սույն թվականի մայիսի 15-ին Հայցվորի հետ կնքված----------պայմանագրից բխող իրավահարաբերությունների վերաբերյալ: Գտնում եմ, որ հայցվորի պահանջները անհիմն են հետևյալ պատճառներով.

ա) ----------
բ) ----------
գ) ----------
դ) ----------

Ուստի, ելնելով վերոգրյալից, պահանջում եմ մերժել հայցը՝ այն թողնելով առանց բավարարման:

Հայցվորի պահանջների անհիմն լինելը հիմնավորվում են հետևյալ ապացույցներով:

ա) ----------
(նշել պահանջները հիմնավորող ապացույցները)
բ) ----------
գ) ----------
դ) ----------

Կցվում են հետևյալ փաստաթղթերը՝

բ) ----------,
գ ----------,
դ) ----------,
ե) լիազորագիր:

ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝
(ստորագրություն)

ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ
ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ
(ՈՒՂԵՑՈՒՅՑ)
Թողարկում 2

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա»
հասարակական կազմակերպություն

ք.Երևան, Նալբանդյան 7/2
հեռ.՝ 54-01-99,
ֆաքս՝ 58-02-99
էլեկտրոնային փոստ՝ ayla@ayla.am
վեբ կայք՝ www.ayla.am

Ստորագրված է տպագրության 07.12.2005թ.: Չափսը՝ 60 x 84 1/32: Թուղթը՝ օֆսեթ № 1: Տառատեսակը՝ «Ghabuzian Arial»: Տպագրությունը՝ օֆսեթ: 3.5 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 1500 օրինակ:

«ԳԵՎՈՐԳ - ՀՐԱՅՐ» ՍՊԸ

ԼՈՒՍԱԿՆ

Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ 52-79-74, 52-79-47:
Էլ. փոստ lusakn@rambler.ru